№ 159 ՈՒՐԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 24

1909

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 24 № 159

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ
(37-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Օգոստոսի 1-ից մինչև տարվայ վերջը 5 րուբլի:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակադրոշմ:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршалковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

Կիրակի, յուլիսի 26-ին, ՄԱՆԳԼԻՍԻ հայոց եկեղեցում տեղի կունենայ ժամը 12-ին
Հոգեհանգիստ
Մոսկվայում երկարատև հիւանդութիւնից յետոյ վախճանված
ԴԱՒԻԹ ԱՍՐԻԲԷԿԵԱՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆՑԻ
համար, որի մասին յայտնում է այրին՝ Մարիամ Միքայէլեանցը իր զաւակներով:
688. 1—1

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը

հրաւիրում է այն անձերին, որոնք ցանկանում են մասնակցել Ժողովրդական Տան համար պատրաստվող երգեցիկ խմբին և երաժշտախմբին, դիմել Ժողովրդական Տան երաժշտական մասի կառավարիչ Յովսէփ Գէորգիեվիչ Տէր-Դաւթեանին (Ելիզավետինսկայա, 40): Ընդունելութիւնները ամեն օր՝ երեկոյեան ժամը 6-ից մինչև 7-ը:

(ու. կ. ե.) (առ.) 687. 3—1

ԿԱՆԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿՈՒՐՍԵՐ ԽԱՐԿՕՎՈՒՄ
(Վօզնեսենսկայա փող. № 3)

ՊԱՏՄԱ-ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ և ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ֆակուլտէտների I, II և III կուրսերը (եռամեայ դասընթացքով, ինչպէս Մոսկվայի Կայսեր. Լիցէյում) մտնելու համար խնդիրներն ընդունվում են այդ ֆակուլտէտների գրասենեակում (Մալօ-Դօնցարօվսկայա, II):

ԲԺՇԿԱԿԱՆ ֆակուլտէտի (III կուրսի կլինիկաները արդէն պատրաստ են) I, II և III կուրսերը մտնելու համար խնդիրներն ընդունվում են Բժշկական ֆակուլտէտի գրասենեակում (Վօզնեսենսկայա, 3): Խնդիրները տրվում են Կուրսերի Կառավարչի անունով և ուղարկվում են ընտրած ֆակուլտէտի գրասենեակը:

I կուրսը մտնելու համար խնդրքի հետ միասին ներկայացվում են հետևեալ դոկումենտների բնագիրները. գիմնազիայի 7-րդ դաս. աւարտման վկայական, ծննդեան մետրիկ. վկայական (ամուսնացածների համար՝ ամուսնութեան վկայական ևս), բարեյուսութեան վկայական, խնդրատուի 2 լուսանկարը, կէս տարվայ ուսման վճարը (բժշկ. ֆակուլտ. վճարը տարեկան 200 ր., իրաւաբանակ. և պատմա-լեզուաբան.—125 ր.) և պօստային մարկաներ պատասխանի համար, այլապէս խնդիրները անուշադիր են թողնվում: Բարձր կուրսերը մտնելու համար՝ բացի վերոյիշեալ դոկումենտներից՝ պիտի ներկայացնել նաև վկայական, որ խնդրատուն հաշւվում է եղել համապատասխան հիմնարկ. սեմեստրներում:

Կուրսերում թէ տեսականորէն և թէ գործնականորէն աւանդվում են (բոլոր ֆակուլտէտների ունկնդրուհիներին) լատիներէն, նոյնպէս և նոր լեզուներ՝ ֆրանսերէն, անգլիերէն և գերմաներէն:

Հրէական դաւանութեան պատկանող անձերին Կուրսերը բնակութեան իրաւունք չեն տալիս:

(24, 26, 28 օգ. 15, 25) (առ.) (М. 231186) 685. 5—1

Զանգեզուր գաւառի՝ ՂԱՓԱՆԻ և ՄԵՂՐԻԻ շրջանի գիւղական միդասեան դպրոցների
համար
հարկաւոր են
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Առաւելութիւն կը տրվի Ներսիսեան դպրոց կամ Գէորգեան ճեմարան աւարտածներին: Խնդրատու ուսուցիչները պիտի ներկայացնեն իրանց աւարտման վկայականները կամ նրանց պատճէնները: Պայմաններն են. բնակարան, ծառայ, վառելիք և 420—480 ր. ռոճիկ: Մանրամասն պայմանների մասին ցանկացողները թող բարեհաճեն դիմել մինչև օգոստոսի 10-ը հետևեալ հասցէով՝ Баку, контора О-ва „Арамаздъ" А. Вачьянцъ.

(հ. շ. ե.) (առ.) 657. 3—3

ԹԻՖԼԻՍԻ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
երթևեկ հիւանդների համար ամեն օր, Վօկզալնայա 8, տ. Ենֆիաճեանցի:
Տելեֆօն 695

Ե. Գ. ՖԵԴՕՐՕՎ ամեն օր, բացի չորեքշաբթի և կիրակի օրերից, $8\frac{1}{2}$-ից մինչև $9\frac{1}{2}$, ներքին հիւանդ.:

Վ. Դ. ԳԱՄԲԱՇԻՁԷ ամեն օր, բացի կիրակի օրերից, 11—12 ժամը, ներքին և երեխաների:

Բ. Ա. ՓՈՓՈՎԵԱՆ երկուշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ 12—1 ժամը, կոկորդի քթի և ականջի:

Գ. Մ. ՄԱԿԱՐԵԱՆ երեքշ. և ուրբաթ օրերը 12—1 ժ., ներքին:

Ա. Ն. ԴԻԱՍԱՄԻՁԷ ամեն օր, $11\frac{1}{2}$-ից մինչև $12\frac{1}{2}$ ժ., սիֆիլիս և կաշուէ հիւանդութիւններ:

Ն. Մ. ՄԵԼԻՔՕՎ ամեն օր, խիրուրգիական և կանանց հ. 1—2 ժամը:

Ի. Դ. ԳՕՄԱՐԹԵԼԻ ամեն օր, ներքին և երեխաների, 2—3 ժամը:

Բ. Ս. ՄՈՒՍԽԵԼՕՎ ամեն օր, բացի կիրակի օրերից, 2—$2\frac{1}{2}$ ժ., աչքի հիւանդ.:

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Գ. ՄԻՐԶՕՅԵԱՆ ամեն օր, բացի կիրակի օրերից, 6—7 ժ., ներքին և երեխաների:

Ն. Գ. ՉԻՉԻՆԱՁԷ ամեն օր, բացի կիրակի օրերից, 6—7 ժ., ներքին և երեխաների:

Հիւանդանոցում կատարվում են միկրօսկօպիական, բակտէրիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս ծաղիկի պատուաստում և ծծմայրերի քննութիւն: Վճար խորհրդի համար 50 կօպէկ:

(օ. մ.) ա. 38. 100—66

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ

Ամեն անգամ, երբ մեզ դիմում են օտարները, խնդրելով մատնացոյց լինել մի որևէ աշխատութեան վրա, որը լիակատար տեղեկութիւն տար Կովկասի մասին, մենք մեզ զգում ենք ոչ միայն դժուար կացութեան մէջ, այլ և կարծես ենթակայ մի մեղադրանքի՝ թէ ինչու մենք հոգատար չենք եղել, որ այդպիսի աշխատութիւն գոյութիւն ունենայ:

Արդարև չը կայ մի ամբողջացված աշխատութիւն, որը կարելի լինէր առաջարկել այն անձին, որ կամենում է ծանօթանալ մեր երկրի ազգաբնակութեան և նրա կեանքի հետ:

Եւ այդպիսի աշխատութեան պակասութիւնը զգում են ոչ միայն օտարները, այլ և մեր երկրի մարդիկ, որոնք նոյնպէս բաւական անգիտակ և անտեղեակ են մեր երկրի կեանքին և հանգամանքներին:

Ճիշդ է՝ կան Կովկասի մասին համառօտ տեղեկութիւններ աշխարհագրական ձեռնարկներում, բայց դրանք չեն տալիս այն, ինչ որ պահանջում են Կովկասի հետ ծանօթանալ ցանկացողները: Մանաւանդ որ աշխարհագրութեան եղած ձեռնարկներն էլ կազմված են բաւական անաջող և չեն արձանագրել կովկասեան տնտեսական և հասարակական կեանքի վերջին ժամանակի արտայայտութիւնները:

Առանձին անհատներ, որոնք հանգամանքների շնորհիւ կամ ինքնուս կերպով ծանօթ են մեր երկրին, կազմում են բացառութիւն: Մարդկանց մեծամասնութիւնը անտեղեակ է այն բանին, թէ ինչ է նրա մայր երկիրը, ինչ հարստութիւններ ունի վերջինը, ինչ վարչական և հասարակական կազմակերպութիւն ունի, ինչ արդիւնաբերութիւններ է նա պարունակում և ինչ ընթացիկ հոգս ու ցաւերի առաջ է նա կանգնած:

Ասել, թէ նիւթեր չը կան մի հայրենագիտական կամ կովկասագիտական աշխատութիւն կազմելու համար, անարդար կը լինէր: Ճիշդ է՝ մեր երկրի ուսումնասիրութիւնը դեռ անկատար է, մեր վիճակագրութիւնը դեռ իր սաղմնային զարգացման առաջին աստիճանների վրա է և մեր տնտեսական կեանքի երևոյթները դեռ գիտնական հետազօտութեան բովից չեն անցել իրանց ամբողջ ամփոփով, այնուամենայնիւ այն, ինչ որ կայ ներկայումս, բաւականաչափ նիւթ է մատակարարում որոշ գաղափար տալու մեր երկրի մասին և, յամենայն դէպս, մարդիկ գոհ կը լինէին տեսնել աշխատութիւն, որը շահագործած լինէր գոնէ այն նիւթը, որը ներկայումս գոյութիւն ունի մեր իրականութեան մէջ:

Կովկասի մասին սիստեմատիկ կերպով կազմված աշխատութիւնները ժամանակի պահանջ են թէ մեզ և թէ օտարների համար, և անշուշտ անհրաժեշտ է, որ մեր հիմնարկութիւններից կամ մեր բանասէրներից մէկը զբաղվէր այդպիսի աշխատութեան կազմութեամբ:

Մենք կարծում ենք, որ աշխատասիրողները նոյնիսկ նիւթական զըրկանք չեն կրի մի այդպիսի ձեռնարկութիւնից. բայց, անկասկած, ցանկալի է, որ մի այդպիսի գործ խրախուսված լինէր նախնական աջակցութեամբ, որպէսզի աշխատասիրողները բացի մտաւոր աշխատանք տալուց ենթարկված չը լինէին նաև նիւթական զոհողութեան:

Ա. Քալանթար

ԿԱՅՍՐԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Կօուս, 22 յուլիսի

Կէսօրից յետոյ 5 ժամին արքայական «Բրիտանիա» զբօսանաւը, ուղեկցված հականաւերով, վերադարձաւ Կօուս: Կայսրը և Թագաւորը կանգնած էին տախտակամածի վրա և ոգևորված խօսակցում էին Օգոստափառ Անձանց հետ, ապա նաւով անցան դէպի իրանց զբօսանաւերը: Առաւօտից տեղի ունի մակոյկների և մարտանաւերի եռանդուն երթևեկութիւն «Շտանդարտի» և ափի միջև: Ցերեկով անգլիական ժուռնալիստների մի մասը, պաշտօնական անձանց ուղեկցութեամբ, այցելեց «Շտանդարտը» և մանրամասն դիտեց շքախմբի զբաղած սենեակները: Առաւօտեան Նոյին Մեծութիւնների Օգոստափառ Երեխաները ափ իջան, այցելեցին Օսբօրն: Երեկոյեան ութ և կէս ժամին «Շտանդարտի» վրա կայացաւ հանդիսաւոր ճաշ: Սալօնը, որի մէջ բացված էր սեղան 54 հոգու համար, շքեղ կերպով զարդարված էր վարդերով, ներկայացնելով փէերական տեսարան: Նոյին Մեծութիւնները բռնած ունէին կենտրոնական տեղեր միմեանց հանդէպ: Կայսրի աջ կողմը նստած էր Թագուհին, շվէդական Թագաժառանգ պրինցը, պրինց Խրիստիանի ամուսինը, Ասկվիտ, մարկիզուհի Օրմօնդ, Կայսերական Պալատի մինիստրը. ձախ կողմը՝ Ուէլսի իշխանուհին, Կօննաուտեան դուքսը, Բատտէնբէրգեան Հէնրիխ պրինցի ամուսինը, մարկիզ Օրմօնդ, Շլէզվիգ-հօլշտէյնեան Վիկտորիա պրինցուհին: Կայսրուհու աջ կողմը նստած էին Թագաւորը, շվէդական Թագաժառանգ պրինցուհին, Արգայլեան դուքսը, պրինցուհի Պատրիցիա. ձախ կողմը՝ Ուէլսի իշխանը, պրինցուհի Վիկտօրիա, Կօննաուտեան Արտուր պրինցը, Կօննաուտեան դքսուհին և երկու շքախմբերի անդամները: Ամբողջ ճաշի ժամանակ նաւերը նաւակայանում լուսավառված էին: Ճաշից յետոյ Նոյին Մեծութիւն-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏԱՆԵԿԱՆ ՀՈԳՈՒ ՑՈՅՑԵՐԻՑ

(Մի ծաղկափթիթ կեանքի անժամանակ կորստեան առիթով)

Կայ մի սֆինքս, որն աշխարհի սկզբից թէ հանճարի և թէ հասարակ մահկանացուի, թէ գիտնականի և թէ թերուսի, թէ փիլիսոփայի և թէ սաղմնային ուղեղի, թէ բանաստեղծի և թէ չոր ու ցամաք սրտի ու անզգայ ողորմելի երևակայութեան, վերջապէս թէ հարուստի և թէ աղքատի ոչ միայն հետաքրքրական այլ և լուրջ, հոգեմաշ մտատանջութեան նիւթ է եղել:

Զգաստ ընթերցողը արդէն գուշակում է. կեանքի և մահվան էութիւնն է այդ անըմբռնելի գաղտնիքը:

Նրա առջև՝ անզօր ու իր մտածողական և զգացողական պեղումների մէջ յուսախաբ մարդը նահանջել է, նահանջում է և ո՞վ գիտէ երբ, գիտութեան որպիսի հանճարեղ գիւտից յետոյ, տիեզերական որպիսի յեղաշրջումից յետոյ, նա՝ մարդը պիտի ազատվի այդ ողբերգական հանգոյցից, որը բարւոք է պնուանել հոգու ու մտքի մակարդակ:

Կարելի՞ է արդեօք նախանձել այնպիսիներին, որոնք վաղորդեան ժամին շրջելիս՝ չեն զգում բնութեան հրաշալիքների խորհրդաւոր, կաշկանդիչ գեղեցկութիւնը, որոնց սրտում այդ պահուն առաջ չէ գալիս մի քնքոյշ, վերասլաց թրթռանք արշալոյսի հետզհետէ ծաւալվող գոյներից և կամ արտուտի անհոգ ու կենսախինդ գեղգեղանքից, որոնց հոգին չէ հրճւում կարկաչուն առուի մանրիկ ականակիտ ալիքների խաղից և կամ հիւրընկալ մարգում զողորիկ հորթուկների թռչկոտանքին նուագակցող հովվի սրնգից:

Կարելի՞ է արդեօք անցնել ծաղկոցով և մտայոյզ կանգ չառնել կարծես ճարտարապետական, նկարչական կանոններին հարազատ կազմված ու զարգացող բոյս ու ծաղիկների առջև:

Կայծակի, որոտման, փոթորիկի ու հրավիժումների ժամանակ և կամ մելամաղձ լուսնկայ գիշերին, պայծառ արեգակնային երկնքի տակ և կամ մութ մեղամծին երկնակամարի, արդեօք բնութեան խորքերում ներհող դեր չէ՞ մեխում ձեզ այդ երևոյթների գերբնական ծագման վրա, չէ՞ բևեռում ձեր ուղիղը տարածութեան մէջ, որտեղ նոյն կամքի, ոյժի ու հանճարի միլիօնաւոր ցոլքերն են իշխում:

Երջանի՞կ են արդեօք նրանք, որոնց մտքում չէ ծագում տիեզերական հանճարի կապը մարդկութեան գոյութեան փիլիսոփայութեան հետ, երբ նրանք մուտք են կոխում որևէ գիտական հաստատութիւն, որտեղ ամփոփված են հազարաւոր Նիւթոնների, Գալիլէյների, Ջիմս Ուատների, Լաւուազիէների, Էդիսոնների և այլոց գիւտերը իրանց բիւրաւոր գործադրական հետևանքներով:

Կամ որտեղ տիրում է մտքի հսկաների՝ Սօկրատէսի, Պրուդօնի, Քրիստոսի, Դարվինի, Տօլստոյի, Նիցշէի. վարդապետութեան ոգին:

Որտեղ լուսաւոր դափնիներով շրջանակված շնչում են Հօմերոս, Դանտէ, Շէքսպիր, Գէօթէ, Հիւգօ և ուրիշներ:

Որտեղ շլացնում են մեզ Ռաֆայէլի, Բօքլինի, Այվազովսկու վրձինների արտադրած գունաւոր ադամանդները:

Որտեղ վերջապէս հառաչում են՝ Բէթհօվէնի, Շուբերտի, Բէրլիօզի, Ռուբինշտէյնի հոգիքը քնքոյշ լարերից հիւսված:

. . . .

Գիտակցօրէն ապրել ցանկացողի համար ապա այս խնդիրների շուրջը առաջ է գալիս մի ողբերգութիւն, մի յորձանք, որից դժուար է դուրս գալ հերոսաբար:

Պատանեկան հասակի գեղեցկութիւնը հէնց դրա մէջ է, այդ ողբերգական խնդիրների, որոնց այս կամ այն լուծումը համլէտական դիլլեմի պատասխանն է:

Ոմանք կանգ են առնում լուռ երկիւղածութեան մէջ, ընդունելով բարձրագոյն կամքի տնօրինութիւնն և օգում լողացող անշօշափելի միկրօ-օրգանիզմների վիճակում և սողացող թունաւոր օձի և ապուշի և աստուածային հանճարով օժտված մարդկային ցեղի գերագոյն անհատում: Խոնարհվելով այդ տնօրինութեան առջև, այդպիսիները հաշտվում են իրանց հոգու ու մտքի թզուկութեան հետ և սեղմվում իրանց համար կանխօրէն պատրաստված շրջանակում, առանց բողոքի, առանց պայքարի և հոգեկան թախիծի:

Իւրատեսակ հերոսութիւն է այս, թոյլատրելի է ասել,—սարկական հոգեբանութեամբ շնչող:

Դառնանք մի այլ հերոսութեան: Ոմանց գիտակցութեան մէջ առաջինները գաճաճի դէմքով ու էութեամբ են պատկերանում. սրանց համար բարձրագոյն կամքի իմաստը դադարում է լինել լոկ հրամայողական. հետազննական ոգին, խնդրի արմատը գտնելու ջերմութեանը սկսում է կրծել, քըրքրել սրանց. կեանքը առանց ճշմարտութեան յաղթանակի լինում է անգոյն, տաղտկալի, և կարիք է զգացվում նրան նիւթելու գեղեցիկ, հետաքրքրական պարունակութեամբ, հաղորդելու նրան մարդկային կոչման վայել բնոյթ, յոյզ, փայլ, գոյն:

Ծաղր կեանքը, էպիկուրեան տրամաբանութեան, հեռու բանականութեան ջղաձգութիւններից—թող ներվի ինձ օտարոտի ոճս—դառնում է քարէ դաղաղ երկաթէ գուռով, որ վարագուրում է մարդուց արեգակի լոյսը, արեգակի՝ որպէս ճշմարտութեան առհասարակ:

Այդ կեանքի հետ սրանք չեն հաշտվում, այլ նետվում են այն հաւանական աշխարհը, որտեղ շատ ուղեղներ դարերի ընթացքում մաշվել են, ապարդիւն ջանալով լուծելու «տիեզերական սֆինքսը», աշխարհը, որտեղ առաւել յուսալի է ստանալ գէթ ակնարկներ և համեմատական գոհացումն համաշխարհային վշտի նկատմամբ:

Ընդլայնվում է ահա մի անսահման տարածութիւն, մի անեզր ովկիանոս. ահա շրջում են նրա մակերևոյթով Կօլումբներ, խաղալիք դառած տարերային արհաւիրքներին, որոնում են նորանոր ցամաքներ, սակայն ափը մշուշում է, հողմերը կատաղի և կողմնացոյցը կասկածելի:

Գիտութեան ովկիանոսն է այդ:

Որքան հեռու են լողում, այնքան կըրկնապատկվում է փարոսը տեսնելու ձգտումը, այնքան հեռանում է քեզանից եզերքը, ծաւալվում հօրիզոնը, և դու զգում ես քո ոչնչութիւնը:

Այստեղ ահա յուսախաբվելուց յետոյ ստորերկրեայ ոյժերին կոչ գնալու, խպառ ոչնչանալու հեռանկարները հանդէպ են գալիս իրանց հիւպնոսական դրացութեամբ նրանց համար, ովքեր ապաւինել էին գիտութեան և հանդիպել նրա սոսկ լռութեանը: Սրանց պաշտպանում է այն հոգեկան տանջանքի թրանսը, որ մանիաների յատկանիշն է: Վճիռը շատ հասարակ է՝

«Լաւ է անարգու մահ, քան մշտնջենական կասկածների, թերի ճշմարտութիւնների տակ ճնշված գոյութիւն»:

Ճշմարիտ է:

Մարդու համար սահմանված է կեանք և ոչ գոյութիւն: Հետևապէս կոչնում է երկընտրութիւնը: Պատանի հոգին, որն աւելի, քան մի այլն ապրում ու թրթռում է «սֆինքսը» գիտութեան պատասխանով լուծելու յոյսով, ողջագուրում է մի համարձակ որոշում և դիւական բըբիջը դէմքին նետվում յաւիտենականութիւն, կրկնելով պատմական ճգնաւորների կրաւորական բողոքը՝ «Frère, il faut mourir».

«Ես սիրում եմ գիտութիւնն այնպէս կրքոտ և ջերմ, որպէս պատանին ընդունակ է սիրելու իր քնքշուհուն»—խոստովանում է գիտութեան սիրահար պատանին:

Սակայն քնքշուհին արձագանք չէ տալիս պատանու հրկիզված սրտին, և ցնորքների ապետը վճռում է Նեվայի սառն ալիքներով յագեցնել հոգու ծարաւը:

Եւ ահա, ընթերցող, քո առջև այդ «քընքշուհի-գիտութիւնից» անարգված մի անշընչացած սիրահար, պատանի ուսանող...

Վշտի ու սգոյ հառաչները, խառնվելով յուղարկաւորական սաղմոսերգերի տխուր, մռայլ ու թախծոտ ելևէջներին, լողալով կնդրուկի ամպերում վեր են սլանում, դէպի տաճարի փառաբանված կամարները, որտեղից ջերմեռանդութեան ու աղօթական երկիւղի հետ իջնում է կարծես նախախնամութեան մի հաշտեցուցիչ սփոփանք ես՝ «Աշխարհի խորհուրդը անըմբռնելի է և մարդն անզօր մաքառելու նրա օրէնքների դէմ»...

ները և Օգոստափառ հիւրերը անցան տախտակամածը, ուր կայացաւ ռուսական բալալայկա ածողների կոնցերտը։ (Հ. Գ.)

—

Կոուս, 22 յուլիսի

Առաւօտեան 11 ժամին «Շտանդարտի» վրա Նոցին Մեծութիւնների ներկայութեամբ կայացաւ հանդիսաւոր մաղթանք Կայսրուհի Մարիա Ֆէօդօրօվնայի անուանակոչութեան առիթով։ (Հ. Գ.)

—

Լոնդօն, 22 յուլիսի

«Թայմս» գոհունակութեամբ ընդգծում է, որ Կայսրի այցելութիւնները ամուր հիմքերի վրա դրեցին եռապետեան համաձայնութիւնը և նրա դերը խաղաղութիւնը պահպանելու գործում։ Առանց այդ համաձայնութեան Ռուսաստանի և Անգլիայի համաձայնութիւնները Միջին Ասիայում վաղուց արդէն ընդունեցին լարված բնաւորութիւն։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 22 յուլիսի

Երեկոյեան լրագիրները գոհունակութիւն են յայտնում այն բաղդաւոր փոփոխութեան առիթով, որ տեղի ունեցաւ վերջին տարին անգլօ-ռուսական յարաբերութիւնների մէջ և այժմ շատ սրտագին են դարձել։ (Հ. Գ.)

—

Բերլին, 22 յուլիսի

Մամուլը այն կարծիքն է յայտնում, որ կենացների իմաստը Կոուսում չէ դուրս գալիս սովորական սահմաններից։ Լրագիրները կանգ են առնում կենացների այն կէտերի վրա, որոնց մէջ շեշտվում է Դումայի անդամների ճանապարհորդութիւնը։ Այդ յիշատակութեան մէջ նրանք տեսնում են զիջում անգլիական ազգաբնակութեան այն շերտերին, որոնք դեռ էլի չեն համակերպում Ռուսաստանի հետ բարեկամանալուն։ (Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Պետերբուրգ, 22 յուլիսի

Այսօր Կայսրուհի Մարիա Ֆէօդօրօվնայի անուանակոչութեան օրը Պետերհօֆի Մեծ Պալատի տաճարում մատուցվեց պատարագ և տեղի ունեցաւ մաղթանք։ Ժամասացութեան ըսկզբին Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրօվիչի ուղեկցութեամբ բարեհաճեց պալատ ժամանել Կայսրուհին։ Ժամասացութեանը նոյնպէս ժամանեցին յունաց Թագուհին, Մեծ Իշխանուհիները և Մեծ Իշխանները, նոյնպէս ֆինանսների և զինւորական մինիստրները, սինօդի օբէր-պրօկուրօրը, շքախմբի անդամները և ուրիշ բարձրաստիճան անձինք։ Ժամասացութիւնից յետոյ ներկայ եղողները բաղդ ունեցան մատուցանելու Նորին Մեծութեանը շնորհաւորութիւններ, որից յետոյ Պալատի դահլիճներում նախաճաշ տրվեց, որին ներկայ էր Կայսրուհին, Կայսերական Ընտանիքի անդամները և հրաւիրված անձինք։

Կայսրուհու անուանակոչութեան առիթով հանդիսաւոր մաղթանքներ կատարվեցին մայրաքաղաքի եկեղեցիներում։ Մայրաքաղաքը զարդարված էր դրօշակներով. երեկոյեան լուսավառված էր։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 22 յուլիսի

Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլօվիչ ստանում է փոխ-ծովապետի աստիճան՝ նշանակվելով Նորին Մեծութեան գեներալ-ադիւտանտ։ (Հ. Գ.)

—

Նովօրօսիյսկ, 22 յուլիսի

Ժամանակաւոր զինւորական դատարանը յուլիսի 7-ի և 21-ի նիստերում քննելով նովօրօսիյսկեան հանրապետութեան գործը, տասը ժամ խորհրդակցելուց յետոյ դատապարտեց 3-ին աքսորի, 2-ին տաժանակիր աշխատանքների, 13-ին բերդարգելութեան, 1-ին բանտարկութեան, 6-ին արդարացրեց։ Աքսորի դատապարտված երկուսի վերաբերմամբ դատարանը որոշեց միջնորդել նրանց վիճակը թեթևացնելու մասին, միևնոյն ժամանակ որոշեց անգործութեան համար պատասխանատւութեան կոչել նահանգապետ Բէրէզնիկօվին, ժանդարմեան ռոտմիստր Դաւիդօվին։ Պաշտպանում էին Սօկօլօվ, Խօմենկօվսկի, իշխան Անդրօնիկօվ, Կարեակին և Դումայի անդամ Աջէմեան։ (Հ. Գ.)

—

Գանձակ, 22 յուլիսի

Պարսկական Հաջի խանի ուղարկած 12 զինված պարսիկները, յարձակվելով Մամէդբէկլու գիւղի վրա, գերի վերցրին չորս պահապանների, յափշտակեցին բնակիչների գոյքը և փախան Պարսկաստան։ Կարեագինի գաւառապետը Պարսկաստան ուղարկեց մարդիկ, որոնք ազատեցին պահապաններին, իսկ յափշտակված գոյքը չը կարողացան յետ առնել։ (Հ. Գ.)

—

Պեատիգօրսկ, 22 յուլիսի

Առանձին խորհրդակցութեան մէջ աւարտվեցին վիճաբանութիւնները հանքային ջրերի կարիքներին վերաբերեալ ընդհանուր հարցերի մասին։ Որոշվեց, որ թոյլատրելի չէ, որ ջրերը տրվեն մասնաւոր մարդկանց կամ քաղաքային վարչութիւններին. անհրաժեշտ է վերակազմել ներկայ վարչութիւնը։ (Հ. Գ.)

—

Նոր-Բուխարա, 22 յուլիսի

Բուխարայի էմիրը ճանապարհ է ընկնում Եալտա։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգում լուր է տարածվել, որ երևան է հանված մի կազմակերպված դաւադրութիւն, որ ուղղված է Ստոլիպինի կեանքի դէմ։ («Б.»)

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

Կ.-Պօլիս, 22 յուլիսի

Պատգամաւորների ժողովը, ի նկատի ունենալով Հիլմի փաշայի պահանջը՝ 9000 ֆունտ աւելացնելու մասին, միևնոյն ժամանակ նա հարց դրեց վստահութեան մասին, վերադարձնելով մեծ-վէզիրի նախահաշիւը յանձնաժողովին։ Ներքին գործերի մինիստրութեան նախահաշւի քննութեան ժամանակ Ֆէրիդ փաշան պահանջեց յանձնաժողովի վերացրած անձնական կազմի դեպարտամենտի պահպանութիւնը։ Երբ պատգամաւորների ժողովը 91 ձայնի մեծամասնութեամբ 52 ի դէմ մերժեց պահանջը, մինիստրները հեռացան նիստի դահլիճից։ Սպասվում է մինիստրական մասնակի ճգնաժամ։ (Հ. Գ.)

—

Կ.-Պօլիս, 22 յուլիսի

Ներքին գործերի մինիստր Ֆէրիդ փաշան ենթարկվեց պատգամաւորների ժողովի ձայնատւութեան՝ անձնական կազմի դեպարտամենտը վերացնելու մասին, և հրաժարական չէ տալիս։ (Հ. Գ.)

ԽԼՐՏՈՒՄՆԵՐԸ ՍՊԱՆԻԱՅՈՒՄ

—

Մէլիլիա, 22 յուլիսի

Կաբիլները յուլիսի 21-ին յանկարծակի յարձակում գործեցին գեներալ Ումացի բանակի վրա։ Սպանված և վիրաւորված են մի քանի մարդիկ։ (Հ. Գ.)

—

Լոնդօնից «Бирж. Вѣд.» լրագրին հեռագրում են.

«Թէ որքան լուրջ է իրերի դրութիւնը Սպանիայում, ցոյց է տալիս հետևեալ հարցապնդումը, որ ստացել են Մադրիդից Լոնդօնի ապահովագրական ընկերութիւնները այն մասին՝ թէ կարող են, արդեօք, նրանք ապահովագրութեան ընդունել Ալֆօնս XIII թագաւորի կեանքը։ Հարցապնդումը ստացվել է Մադրիդի պալատից ոչ պաշտօնապէս, բայց բովանդակութիւնը արդէն յայտնի է դարձել լրագիրներին։ Թագաւորի այդ ցանկութեան մէջ ապահովագրելու իրան յօգուտ իր ընտանիքի՝ նկատվում է որպէս նշան, որ նրա կեանքին լուրջ վտանգ է սպառնում։ Լոնդօնի ապահովագրական ընկերութիւնները որոշել են պատասխանել այդ հարցապնդումին, որ պատրաստ են սպանական թագաւորի կեանքը ապահովագրել, բայց պրէմիայի չափը նշանակում են $12^0/_0$»։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

Լոնդօն, 22 յուլիսի

«Դէյլի-Տէլէգրաֆի» թղթակիցը խօսակցութիւն ունեցաւ Իզվօլսկու հետ։ Իզվօլսկին մատնացոյց արեց երկու Արքայական Տների և երկու կայսրութիւնների բարեկամութեան գերազանց հետևանքների վրա, որը խաղաղութեան ամենազօրեղ երաշխաւորութիւններից մէկն է։ «Պարսկաստանը անգլօ-ռուսական համաձայնութեան շահերի ակներև ապացոյցն է։ Ռուսաստանը և Անգլիան սովորեցին վստահութեամբ վերաբերվել միմեանց Պարսկաստանում և կարող են այժմ իրանց ուշադրութիւնը դարձնել այնտեղ իրանց օրինական շահերի պաշտպանութեան վրա, որոնք ամենևին չեն փակում Պարսկաստանի ազգային քաղաքականութեան և նրա քաղաքական զարգացման ճանապարհը։ Ռուսաց զօրքերի ներկայութիւնը բարի պտուղներ տուեց, ազատեց Թաւրիզը և Թեհրանը աւերումից։ Ռուսաստանը հէնց սկզբից դէպքերի հասարակ հանդիսատես էր, բացի այն դէպքերից, երբ խախտվում էին նրա օրինական շահերը։ Կառավարութիւնը անյապաղ յետ կը կանչէ զօրքերին, հէնց որ կարգը վերականգնված կը լինի, այսինքն, երբ վարչական օրգանները կը պարտաւորվեն ցոյց տալու իրանց գործունէութիւնը հասարակական կարգը պահպանելու համար»։ Իզվօլսկի կատարեալ գոհունակութիւն յայտնեց երէկվայ խօսակցութեան առիթով Գրէյի հետ։ (Հ. Գ.)

—

Թեհրան, 22 յուլիսի

Այսօր Զէրգէնդէում անգլիական և ռուսական միսիաների թարգմանները և շահի կառավարութեան ներկայացուցիչները ստորագրեցին նախնական համաձայնութիւն գահընկէց արած շահի վերաբերմամբ։ Վերջինին նշանակված է ցմահ թոշակ 150,000 ռուբլի տարեկան։ Շահը պարտաւորվում է հեռանալ Պարսկաստանից երկու շաբաթվայ ընթացքում և վերադարձնում է բոլոր արքունական թանգագին քարերը։ Համաձայնութիւնը պէտք է վաւերացնէ մէջլիսը, նոյնպէս և ռուսական ու անգլիական միսիաները։ (Հ. Գ.)

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Ֆիրէյդան գիւղ, 16 յուլիսի

Թաւրիզից տեղս ժամանած պրինց Մամէդ-Միրզան, բերելով Մահմէդ-Ալիի գահընկէցութեան և ազատականների յաղթութեան լուրերը, տեղիս ժողովրդի մէջ առաջացրեց աննկարագրելի ցնծութիւն։ Այնպէս արագ տարածվեց այս լուրը, որ հէնց այդ օրվայ երեկոյեան եկան պրինցի մօտ Սուրխա խանը, Ռուստամ խանը, Մալիք խանը և ժողովրդի մեծ բազմութիւն, յայտնելով իրանց ուրախութիւնը և պատրաստակամութիւնը արեան մինչև վերջին կաթիլը պաշտպանելու սահմանադրութիւնը։ Միւս օրը պրինցը հրաւիրվեց Քեարիմ խանի կողմից Մօվլան գիւղը, ուր պրինցը ճանապարհվեց վերև յիշածս խաների հետ՝ խորհրդակցելու յեղափոխութեան թշնամի Րահիմ խանի դէմ մաքառելու մասին, որը պատճառ եղաւ հազարաւոր անմեղ արեան թափվելուն։

Մօվլան գիւղն էին հրաւիրված Ալի խանը, Ալի Մուրադ խանը, Ջաւադ խանը, Սամադ խանը և Ասադուլլա խանը։

Այստեղ յիշեալ այդ ութ խաներն այն խաներն են, որոնք յեղափոխութեան շարժման մէջ ոչ մի ժամանակցութիւն չեն ցոյց տուել. ոչ օգնել են կառավարութեանը և ոչ էլ յեղափոխութեանը։

Պէտք է ասել, որ համեմատաբար Մամաղ-Խանլուն շատ հանգիստ էր, քան թէ Պարսկաստանի միւս մասերը։ Մինչև անգամ Ալի-Մուրադ խանի ձեռք առած միջոցների շնորհիւ, Ռուսաստանից գողացված 6 ձին յետ դարձրին ըստ պատկանելոյն։

Վերև յիշածս բոլոր խաները սահմանադրութեան լուրը ընդունեցին մեծ ուրախութեամբ և անկեղծօրէն խոստացան յեղափոխութեան թշնամիների դէմ կռուելու։

Ֆիրէյդանցի

ԱԴԱՆԱՅԻ ԴԷՊՔԵՐԻ ՇՈՒՐՋԸ

—

I Հայոց պատրիարքը

Կ. Պօլսի հայոց պատրիարքը՝ Եղիշէ սրբ. Դուրեան, յուլիսի 11/24-ին գնացել է մեծ վէզիր Հիլմի փաշայի մօտ և մէկ ժամից աւելի առանձին տեսակցութիւն է ունեցել նրա հետ Ադանայի կոտորածների հետևանքների առիթով։ Պատրիարքը չափազանց յուզված՝ պատրիարքական յանձնաժողովի Ադանայից ուղարկված տեղեկագրից, թաքրիր էր տուել Բ. Դրան, թէ ներկայ պարագաներում ինքն անկարող է շարունակել իր պաշտօնը։ Եւ այդ օրից յետոյ պատրիարքը այլևս չէր պարապում իր պաշտօնի վերաբերեալ գործերով։ Հիլմի փաշայի հետ տեսակցութիւնից յետոյ, պատրիարքը գնաց պատրիարքարան խոստանալով իր հրաժարականը յետ առնել միայն այն պարագային, եթէ կառավարութեան ձեռք առած միջոցները իրական ազդեցութիւն կունենան։

II Օսմանեան պարլամենտում

Ինչպէս յայտնի է, օսմանեան մինիստրների խորհրդի որոշմամբ մի քանի թիւրք երևելիներ են բանտարկվել իբրև ջարդի գրգռողներ և պարագլուխներ։ Մի թիւրք երեսփոխան հարցում էր ուղղել մեծ վէզիր Հիլմի փաշային, թէ ինչ հիման վրա բանտարկվել են Ադանայի երևելիներից Աբդիւլ-Կադէր էֆէնդին և «Իթիդալ» թերթի խմբագիր Իհսան Ֆիքրին։ Մեծ վէզիրը պատասխանել է, թէ զինւորական դատարանը յունիսի 21-ին որոշել է նրանց ձերբակալել իբրև ջարդի մեղսակից. բացի դրանից Ադանայում պաշարման վիճակ հրատարակված լինելով, այնտեղ սահմանադրութիւնը դադարում է գործելուց։ Այս առիթով պարլամէնտի յուլիսի 13/26-ի նիստում հետևեալ վիճաբանութիւնն է տեղի ունեցել։

Վերոյիշեալ թիւրք երեսփոխանը՝ Իսմայիլ Հաքքը՝ դժգոհ է մնում Հիլմի փաշայի պատասխանից և պահանջում է նորից հարցապնդում ուղղել մեծ վէզիրին, որովհետև մինիստրների խորհրդի յայտնի որոշումից յետոյ Ադանայի զինւորական դատարանը հրաժարական է տուել։

Պապիկեան էֆ. (այժմ հանգուցեալ).—21,000 հոգի սպանեցին Ադանայում և այժմ 2 հոգու պաշտպանութիւնն են ստանձնում։

Վարդգէս էֆ. (Էրզրումի երեսփոխան) զարմանք է յայտնում, թէ այդքան աղմուկ են հանում 2 անձի բանտարկութեան համար, որոնք ամբաստանված են իբրև Ադանայի ջարդի դրդիչներ. արդեօք պատճառը այն չէ՞, որ նրանք մահմեդական են։

Լսվում են բողոքի ձայներ։ Նախագահը սպառնում է Վարդգէսին՝ թէ կանոնական պատժի կենթարկէ նրան, որովհետև նրա խօսքերը վիրաւորական են իր ընկերակից միւս պատգամաւորների համար։

Պանչէ Դօրէֆ էֆ. (բուլղար երեսփոխան) խնդրում է «յանուն հայրենիքի շահերի» վերջ տալ այս հարցին և Ադանայի դէպքերի առիթով հարցապնդում չուղղել։

Րահմի բէյ, մի այլ թիւրք երեսփոխան, նկատում է թէ պարլամենտի կողմից Ադանա գնացած և այնտեղից վերադարձած քննիչները (որոնցից մին էր Պապիկեան), դեռ իրանց տեղեկագիրը չեն ներկայացրել և առաջարկում է նախ տեղեկանալ այս տեղեկագրի հետ և ապա ընդունել հարցապնդումը։

Պարլամենտը ձայների մեծամասնութեամբ ընդունում է այս առաջարկութիւնը։

(«La Turquie»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Դուշէթ, 19 յուլիսի

Ամսիս 18-ին նշանակված էր մեր քաղ. վարչութեան իրաւասուների նոր ընտրութիւնը, որին մասնակցում էին 32 ձայն ունեցողներ։ Ընտրեցին հետևեալ 12 հոգին. Ն. Բարաթեան, Ի. Ծոնքաձէ, Ա. Մարտիրոսեան, Գ. Կորինթելի, Գ. Ապրելեան, Ս. Ամիրաղեան, Զ. Դալաքեան, Ի. Զօրզօլօվ, Գ. Ղարիբեան, Ծ. Թաբօրիձէ, Ս. Բարաթեան, Վ. Թուշիէվ։ Իսկ անձնափոխանորդներ՝ Կ. Տրօյեանսկի, Ա. Բարաթեան, Վ.

Անուշաբոյր խայտաճամուկ ծաղիկներից և խոտերից հիւսված փնջեր, ճարտարութեամբ պատրաստած սգոյ-պսակներ գգվելով՝ նազելիաբար հիւրընկալել են պատանու մարմինը և ջահերի խաղումն հրեղէն լեզուներ աղօտ լոյսով շրջանակել են յաւիտենական գոհունակութեամբ ներշնչված դէմքը։

Ժապաւէններ օձապտոյտ փաթաթվել են պատանու իրանով, սեղմելով նրա կրծքին սիրելիների վերջին նուէրը՝ մի նշանաւոր փիլիսոփայի երկ, որ իր արբեցուցիչ հեղինակութեամբ այդ նորափթիթ կեանքի համար հիւսեց անյայտութեան մթնոլորտում ճանապարհորդելու գեղեցիկ զգեստը՝ թարմ ծաղիկներից և պսակներից շաղկապված շապիկը։

Շօպէնհաուէր...

Ցաւագար մտքի ու երևակայութեան, յոռետեսութեան, մշտական ջլատիչ տագնապի ուրուական, հաւասարակշռութիւն կորցրած հոգու մաղձոտ բողոք, չարագուշակ ստուերի յուսահատ հառաչ, տիեզերքի անողոք դատ...

Եւ համբուրում է կուռք-փիլիսոփան պատանու դադարած սիրտը։

Եւ մեռաքսէ շրթունքներ, քնքշաբար շոյելով պատանու ծաղկեպսակ կուրծքն ու գլուխը, շշնջում են նրան սիրելիների կսկիծը, նրանց վերջին հրաժեշտի մեղեդիքը։ Իսկ բիւրեղանման արցունքներ՝ որբացած սրտերից հոսելով՝ մի լռելեայն կենտրոնացած ողբում, կարծես, Մետերլինգեան հոգիների համր խորհրդակցութեան մէջ, նրանց silens-ում ձուլված իջնում են պատանու դէմքին, որպէս վաղորդեան ցօղը խաւարի ստուերով մթագնված՝ այդ խորհրդաւոր ժամին նիրհող բոյսի վրա։

«Ես սիրում եմ գիտութիւնն այնպէս կրքոտ և ջերմ, որպէս պատանին ընդունակ է սիրելու իր քնքշուհուն»։

Ահա միակ ճշմարտութիւնը, որ յայտնի է պատանուն. և այդ խոստովանանքը ամենայարմար տապանագիրն է նրա։

Ընթերցողը թափանցում է պատանու սիրտը, նա տեսնում է այնտեղ ոգևորութիւն, յափշտակութիւն, աղօթական երկրպագութիւն, գրաւիչ ցնորքներ և խելագար հալլիւցինացիա, բոցբոքված սիրատենչ համբոյրներ, խանդ, յոյս, ատելութիւն և սէր, կրակ և զսպված թռիչք, յանցաւոր տրամադրութիւն և անձնազոհութեան ասպետական պատրաստակամութիւն... մի խօսքով այն ամէն առաքինութիւններն ու հերոսական տանջանքի արտադրած գեղեցկութիւնը, որով պաշարվում է մի պատանի հոգի կոյսի ջերմ շնչից կամ միմիայն նրա հրավառական հրապոյրներից ազդված։

Պատանին հաւատում է, որ այստեղ է, այս մօմենտում է հիւսվում իր կեանքը մի այլ կեանքի հետ. նա համոզված է, որ այստեղ են ահա խաչանում իր և մի արարածի կենսուղիները։ Այն կոյսը, որին նա նուիրաբերում է իր կեանքը, որը նրան ապրելու եռանդ է տալիս, որի գրաւիչ աչքերում նա ուզում է կարդալ և սպասում է մի անկեղծ, ճշմարիտ, հպարտ պատասխան, այն կոյսը, որը խոստանում է նրան բանալ վարագոյրը և լուծել պատանուն քայքայող դրաման,—անարգում է պատանուն։

Կը լինի՞ արդեօք կեանքը դրանից յետոյ ախորժելի և սիրալիր յուսախաբ պատանու համար։

Ահա այդ կոյսը, այդ քնքշուհին—գիտութիւնը։

Գիտութիւն։ Խոր, փիլիսոփայական, խորհրդաւոր, անմահ, գեղեցիկ բառ, իմաստ, իղձեր։ Փոխանակ փրկելու պատանու յուզված միտքն ու փոթորկված հոգին, նա ընդհակառակը իր անառիկ հեռանկարներով աւելի ալեկոծեց, աւելի շփոթեց առաձիգ ուղեղին ու սրտին տիրած «Sturm und Drang»-ը. բնական է, որ ահաւոր մահը պէտք է նախապատւելի թւայ, քան անվերջ հարցականներից ու անլուծելի փակագծերից հիւսված ոստայնը։

Բնական, հոգեբանական պահանջ է, երբ մարդ ընկճվում է օրվայ պրօզայի ծանրութեան տակ, երբ ձախորդութիւններ, հիասթափութիւն, շրջակայի հրէշաւոր դիպուածներ ծեծելով մարդուն՝ զնդանի ողբ են նրանից դուրս քաշում և դեռ մուրճը իջխում է օդում, նա դիմում է զգայուն սրտի և նրա քնքշութեան հովանու տակ մոռանում ճակատի խորշոմները։ Զգայուն սիրտը այն հիւրընկալ անկիւնն է, զանազան տառապեալների համար տաճար, որտեղ բացակայում են ժամանակաւոր վայելքները, և փայփայանքի կարօտ հոգին կարողանում է այդտեղ խարիսխ նետել, ինքնամոռացութեան մէջ հաւատալ և յուսալ, սիրել և ապրել։

Շրջական, ժամանակակից կեանքը խիստ բիրտ են և վայրենի բնոյթ, ինտելիգենտ դաստիարակութիւն ստացած անհատի համար։ Մարդկային յարաբերութեանց եղանակները, տիրող կարգերը, հոգու ու մտքի պահանջները կանոնաւոր ընթացքով զարգացնելու պայմանները, ընկերակցութեան էթիկան այնպիսի հրէշաւոր ձևեր են ստացել մեր «կենցաղակիրթ» ածականին հաւակնող երկրում, որ ազնիւ, բարի, միամիտ և կարեկից հոգով անհատը դրանց համակերպվելու համար իր բարոյական կազմում հազիւ թէ տրամադրութիւն չօշափէ։ Սիրելիների անբնական մահ, բարբարոսական արիւնաշաղախ տեսարաններ, մարդկային արժանապատւութեան անարգումն, մի խօսքով այնպիսի երևոյթներ, որոնք ինկվիզիցիայի և բիւզանդական բարոյագիտութեան դարպասների յատկանիշներն են կազմում, մղում են մարդուն մի յաւիտենական ճշմարտութեան, մի հպարտ ազատութեան գիրկը—գիտութեան—որը ունի իր սրբազան, անձեռնմխելի մթնոլորտը, ուր միայն հնարաւոր է հանգչել և երազել ապագայ, փայլուն, գեղեցիկ, անկախ։

Ո՞րտեղ է «տիեզերական վշտի» արմատը. ի՞նչ է ինքը տիեզերքը, վիշտը. ո՞րպիսի սուբեկտիվ և օբեկտիվ շօշափումների արդիւնք է նա. ի՞նչ է մարդը, նրա ուղեղը, հոգին, սիրտը, ֆիզիկական կազմը. ի՞նչ է մարդկային իրաւունքը. ինչո՞ւ է նա խախտվում. ե՞րբ է վերջապէս տիրելու հարմօնական կենակցութիւն մարդկային ցեղի համար, կամ տիրելո՞ւ է արդեօք այդպիսին. ո՞րտեղ է ամենայն ինչի սկիզբն ու վախճանը. ի՞նչ է գիտութիւն, արուեստ, երաժշտութիւն, օրէնք, կրօն, վերջապէս կեանք և մահ։

Ահա գիտութեան հօրիզոնը։

Ահա այն զգայուն սիրտը, որն իր փայփայանքով հաւատ և յոյս, սէր և կեանք պիտի ներշնչէ առօրեայ չարիքի տակ ճնշված պատանուն։ Նրան պէտք է ուսումնասիրել ո՛չ թէ շաբլօնի չափերով, այլ նրա ամբողջ գեղեցկութեամբ։ Նրան պէտք է սիրել, խնկարկել և նշանաբան ունենալ։ Դիպլօմ, ժէտօն, արտօնութիւն ու աստիճան—դրանք գիտութեան տաճարի այն աղիւսներն են, որոնք պէտք է մնան աներևոյթ, ստուերի մէջ։

Գիտութիւնը քնքշուհի է, գեղեցկուհի է։

Այո՛, բայց ո՛չ դիւականացած, այլ քնած, որ հետզհետէ բարձրացնում է իր արտևանունքները և ցոյց տալիս մեզ իր գրաւիչ աչքերը։ Եթէ մեր սիրտը մենք նուիրաբերել ենք նրան, նրա լռութիւնից չը պէտք է յուսախաբվենք և անարգված համարենք մեզ։ Գեղեցկուհուն պէտք է շարունակենք սիրել, սիրել ասպետաբար, տոգորված նրա գեղեցկութեամբ. տանջվել, զգալ, յուսալ, սիրել աւելի կրքոտ։

Չէ՞ որ մեզ յատուկ է բոցավառվել կրկնակի սիրով, երբ փոխադարձութեան հրապոյրը բացակայում է։

Թիթեռը կրակի սիրահարն է. շլացած իր սիրուց, նա մղվում է այդ տարերքի մէջ և այրվում։ Մարդկային կեանքի ողբերգութիւնը ճոխ է և նշանաւոր նրանով, որ մարդը օժտված է բանականութեամբ։ Հետևապէս, փոխանակ նետվելու կրակը և ոչնչանալու, նա նուաճում է նրան և հպատակեցնում իր քմահաճոյքին։

Գիտութիւնը նոյն կրակն է մեզ՝ թիթեռներիս համար։ Մենք նրա սիրահարներն ենք. սակայն չենք ուզում այրվել այդ հնոցում, այլ նրանից սպասում ենք ջերմութիւն, լոյս, ապրելու եղանակ և աշխարհը նուաճելու ուղեցոյց և ո՛չ թէ գերեզմանափորի դեր։

Իսկ եթէ այդ «քնքշուհին» չէ ժպտում՝ լինենք յանդուգն, զօրեղ, հնարագէտ և գեղեցիկ, կամքով. դիմենք ո՛չ թէ ինքնոչնչացման, որ անկասկած որոշ հերոսութիւն է, երբեմն խրատական նոյնիսկ, այլ դիմենք այն անզուգական երկաթէ յամառութեան, որի օգնութեամբ միջնադարեան ասպետները իրանց քնքշուհիներին ներշնչում էին յարգանք առ այն գեղեցիկ զգացմունքը, որով բռնկված են եղել նրանց սրտերը, և որն եղել է, է և պիտի լինի, քանի որ մարդկային սիրտը բաբախում է —գահ և պսակ դիւցազներգութեան։

Ցոլակ Ղուկասեան

կարօնգօզով (հրաժարվեց), Ի. Րօյինօվ և Գ. Յովսէփեանց։

Եկող

—

Մեծ-Ղարաքիլիսա, 22 յուլիսի

Այսօր Տէրունեանի հրաւէրով 300-ի չափ երեխաներ (6—15 տարեկան) ժողովվել էին ամարային ըստօնգի դահլիճը, որտեղ ինստրուկտօր Սողոմոնեանը սերգատ մեքենայով ցոյց տուեց, թէ ինչպէս կաթը բաժանվում է սերից, բացատրեց, թէ ինչպէս են թուշի և չիչիլ պանիրներ պատրաստում, խօսեց կարագի, ժածունի, թանի մասին և համեմատութեան մէջ դրեց դրանց. պարզաբանեց նոր սեպարատօրի արդիւնքը։ Պարզաբանութիւնը լինում էր հարցերով, որոնցով դասախօսը, որպէս փորձնական դաս, դիմում էր երեխաներին, և վերջիններս սիրով պատասխանում էին հարցերին։

Դասախօսութեանը և փորձերին ներկայ էին ամբողջ կաթնօցի կազմը Սողոմոնեանի հետ և 70-ի չափ էլ երեխաների ծնողներից։ Երեխաների կարգը պահպանում էր Տէրունեան։ Դասախօսութիւնը և փորձերը տևեցին երկու ժամ, սկսելով առաւօտեան ժ. $10^1/_2$-ից մինչև $12^1/_2$-ը, և եղաւ մէկ ընդմիջում 15 րօպէ։ Կարագ պատրաստելուց յետոյ Սողոմոնեանի կարգադրութեամբ Տէրունեան մատուցարանով բաժանեց կարագը հացով երեխաներին, որոնք, ուտելով, շատ համեղ գտան և կեցցէների տարափի տակ գոհ սրտով հեռացան դահլիճից։

Մուտքը ձրի էր։ Թ. Սարգսեան

—

Երևան, 21 յուլիսի

Նախորդ նամակովս հաղորդել էի, որ կառավարութիւնը համաձայնվել է բանտից ազատ արձակել Գէորգեան ճեմարանի նախկին տեսուչ Մինաս Բերբերեանին 50,000 ր. կանխիկ դրամի երաշխաւորութեամբ։

Երէկ նրան արձակեցին։ Ստոյգ տեղեկութիւնների համաձայն, կառավարութիւնը, զիջելով Բերբերեանի հօր դիմումին, պահանջվող գումարի քանակը իջեցրել է 15000 ր.։

Մ. Բերբերեանը գնաց Էջմիածին, որտեղից պէտք է գնար Բիւրական՝ Նորին Վեհափառութեանը ներկայանալու և ճեմարանի վերջին դէպքերի առիթով բացատրութիւններ տալու։

Երէկ բանտից դուրս եկան նաև քաղաքիս պրիստաւի օգնականներ Թորգոմ Խաչատրեանը և Կարապետ Յովհաննիսեանը, որոնք երեք ամիս բանտ նստելով այսօր ազատ են թողնվել, ոչ մի մեղադրանք չը գտնվելով նրանց վրա։ Գ. Աղազադեան

—

Արդվի (Լոռու գ.), 10 յուլիսի

Ամսիս 8-ին մեզանում տեղաց մի սարսափելի կարկուտ և ջարդեց, փշրեց ամեն ինչ, ծառերը ճղնկոտոր արեց, պտուղը թափեց, արտերը, պարտէզները, բոստանները հողի հետ հաւասարեցրեց, խոտը սեւացրեց։ Կարկուտը փչացրեց Արդվիի ամբողջ մասիլը, այգեհատի մի մասը, Հողմախի դաշտի մի մասը, որտեղ ուզունլարցիք են վարում։ Կարկուտը տևեց հինգ րօպէ։ Դժբաղդ գիւղացին անիծում է իր սև օրը։ Վնասը խոշոր չափերի է հասնում։

Ա. Քալանթարեան

—

Նուխի, 22 յուլիսի

Մեր գաւառական ժողովուրդը զուրկ է գիտութիւնից, բայց պարզ է և այն, որ նա զուրկ է մի աւելի կարևոր, մի աւելի անհրաժեշտ բանից՝ բժշկութիւնից։ Գաւառները զուրկ են բժիշկներից, զուրկ են բառիս ամենալայն իմաստով։ Գաւառը մեծ կորուստ ունի շնորհիւ բժիշկների բացակայութեան։ Նա քայքայվում է թէ ֆիզիքապէս և թէ նիւթապէս։ Բայց, դժբաղդաբար, դրա վրա լուրջ ուշադրութիւն չեն դարձնում մեր գործիչները։

Այստեղ օրինակ կը բերեմ մի գաւառ, որը քայքայվել և քայքայվում է։ Այդ գաւառը Նուխու գաւառն է։ Նուխի գաւառական քաղաքն ունի 30,000 բնակիչ, և այսպիսի մի քաղաքում կան միմիայն երեք բժիշկ, այն՝ է զինուորական, քաղաքային և գաւառական։ Դիցուք այս երեքը բաւականութիւն տան քաղաքին. ապա նրա լայնատարած գաւառը. Նուխուց 18—25 վերստ հեռաւորութեան վրա գտնվում են 5 հայկական գիւղեր, այն է Դաշբուլաղ, Սաբաթլու, Ջարղաթ, Գօյբուլաղ և Թարաքա։ Թէ ինչ դժբաղդութիւնների են հանդիպում այս վերոյիշեալ գիւղերը, անկարող եմ նկարագրել։ Հիւանդանում է մէկը։ Նախ դիմում են տեղական դալլաքին։ Գնում են քաղաք բժիշկ բերելու, բժիշկը կամ բացակայում է, կամ մերժում։ Թշուառ գիւղացին դատարկ վերադառնում է գիւղ։ Ստիպված են լինում հիւանդին սայլով քաղաք տանելու։ Եւ ի՜նչ, ճանապարհին հիւանդը ջարդվում, և աւելի վատանալով՝ կամ քաղաքումն է մահանում կամ ճանապարհին։ Այսպիսի պայմաններում ամենաթեթև հիւանդութիւնից շատ-շատերն են մահանում, թողնելով իրանց զաւակներին որբ և մեծ նիւթական հարուած հասցնելով ընտանիքին։

Ի՞նչ անի խեղճ գիւղացին. նա կարծում է թէ այդպէս էլ պիտի լինի...

Անհրաժեշտ է այս հինգ գիւղին մի բժիշկ իր շարժուն դեղատնով։ Գիւղացի ինտելիգենցիայի պարտականութիւնն է մտածել այս մասին։ Այն հինգ գիւղը հեշտութեամբ և ուրախութեամբ կը պահեն բժշկին. գործին գլուխ անցնող է հարկաւոր։ Բաւական է, պարոններ, ինչքան լռեցինք։ Առողջութիւնը բարձր է ամեն ինչից։ Լռութիւնը յանցանք է։ Մ. Բէգլարեանց

ԿՈՒՇԿԱՅԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

—

Կուշկա, 12 յուլիսի

Կուշկան, որ գտնվում է Անդրկասպեան երկրի հարաւային կողմում և ռուս-աւղանական սահմանագլխային բերդ է, իր ազգաբնակութեան թւում ունի մօտ 60 տնից բաղկացած հայ գաղութ, որը կազմված է վերջին 25-ամեակում Շուշու, Շամախու և Զանգեզուրի գաւառներից այստեղ գաղթած հայերով։

Այդ 60 տուն գաղութը, համարեա բոլորը, զանազան կարգի առևտրականներից է բաղկացած։ Կուշկան, կտրված լինելով լուսաւոր երկիրներից, բոլորովին կորած է յետամնացութեան թանձր խաւարի մէջ թէ կուլտուրապէս և թէ գեղարուեստական տեսակէտից։

1885 թ., երբ ռուսները Դաշ-Կիփրու աւղանների կողմից թեթև դիմադրութեան հանդիպելուց յետոյ առաջացան տեղս և հիմք դրին բերդին, այն ժամանակից սկսած հետզհետէ եկան և կապվեցին առևտուրի հետ այս 60 տուն գաղութի անդամները, օգտվելով սախական անծանօթ առևտրականներից և լաւ գներով արտահանելով ռուսական գործարանների ապրանքները (մանուֆ., շաքար, նաւթ, երկաթ), նոյնպէս և Աւղանիստանից Ռուսաստան ներմուծելով բուրդ, բամբակ, մորթի և այլն։ Այնպէս որ տեղիս առևտուրը կենտրոնացած է տեղիս հայ գաղութի ձեռքին։

Ինչպէս Անդրկասպեան երկրի միւս քաղաքներում, նոյնպէս և այստեղ, տեսնելով առևտուրի առատ բերքը, սկսում են հայերը գնել կամ կապալով վերցնել ընդարձակ գետիններ ու կառուցել շինութիւններ։ Չը նայած այն հանգամանքին, որ տեղիս կառավարութիւնը միշտ զգուշացնում էր այդ հայերին, որ աչքի առաջ ունենալով տեղիս բերդի կոչումը, երբ կառավարութիւնը հրամայէ, պիտի կամ քանդեն և կամ թողնեն ու հեռանան,—այդ հայերից մի քանիսը համաձայնվեցին ստորագրութիւն տալ այդ առիթով։ Հայերի անշարժ կայքը ներկայումս գնահատվում է մօտ 180,000 ր.։ Հայերին են պատկանում տեղիս պօստատան, մաքսատան և այլ արքունական հաստատութիւնների շինութիւնները։ Բայց չը նայած, որ տեղիս հայ գաղութը այդքան բարեկեցիկ է, նա ոչ աղօթատուն ունի և ոչ էլ ուսումնարան, գր.-ընթերցարան։

Բերդի կոմենդանտ գեն.-մայոր Միրկուշօվը, 1902 թ. յունիսի 29-ի կանօնադրի համաձայն, մարտի 5-ից արգելեց աւղանհպատակներին մտնել Կուշկայի բերդը, իսկ ամսիս 1-ից առանձին կարգադրութիւն եղաւ, որով արգելվում է կողմնակի անձանց մօտենալ բերդին եօթ վերստից պակաս տարածութեան վրա։

Թ. Գրիգորեան

ԽՕԼԵՐԱ

—

Ռիգա, 22 յուլիսի.—Խօլերայով հիւանդացան 4, մեռան 3 հոգի։

Արխանգելսկ.—Խօլերայով հիւանդացան 2, մեռան 3. Արխանգելեան գաւառում հիւանդացան 6, մեռան 2. Օնէգեան գաւառում հիւանդացան 5 հոգի։

Պօլոցկ.—Յուլիսի 14-ից մինչև 21-ը խօլերայով հիւանդացան 50, մեռան 18 հոգի։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Կովկասեան լեռնաշղթայով վերջնականապէս որոշված է անցկացնել էլեքտրական երկաթուղի։ Երկաթուղու կառուցման գործի համար Թիֆլիսից Վլադիկավկազ հաշւված է 20 միլիօն րուբլի։

◆ Թիֆլիսում ջրաբուժական կայարան հիմնելու նախագիծը շուտով իրագործելու նպատակով հարց է յարուցված քաղաքային վարչութեան առաջ՝ Թուրքերի համար գերեզմանատան տեղ յատկացնելու մասին։ Թուրքերի հին գերեզմանատունը, որ գտնվում է ապագայ ջրաբուժական կայարանի շրջանում, վերացվում է։

◆ Գանձակի նահանգի շիաների մէջլիսի նախագահ և նոյն գաւառի Ղազի Ախունդ Մուհամմէդ - Ախունդ - Ալի-օղլի-Փիշնամազզադէն նշանակված է անդրկովկասեան շիաների հոգևոր վարչութեան անդամ։ Նրա վրա է դրված միաժամանակ նաև շէյխ-իւլ-իսլամի ժամանակաւոր պաշտօնավարութիւնը։

◆ Ճանապարհների հաղորդակցութեան մինիստր Ռուխլօվը մօտ օրերս Կովկաս է ժամանելու։

◆ Մայիսի 5-ին յանկարծակի խուզարկութեան էր ենթարկվել վրաց «Զվէնի Ազրի» լրագրի խմբագրութիւնը, որտեղ ձերբակալվել էին մի քանի հոգի, ի թիւս որոնց ոմն Կախիանի։ Ոստիկանութիւնը, կասկածելով որ իսկապէս Կախիանի է նրա անձնաւորութիւնը, քննութիւն է կատարել, և պարզվել է, որ նա 2-րդ Պետական Դումայի նախկին անդամ Սէվէրեան Ջուղելին է։

◆ Թիֆլիսի նահանգապետը ներքին գործերի մինիստրի օգնական Կրիժանովսկուց ստացել է հետևեալ բովանդակութեամբ հեռագիր. «Պետերբուրգի ճապօնական դեսպանութեան միջնորդութեան համաձայն, խնդրում եմ առանձին ուշադրութիւն և հովանաւորութիւն ցոյց տալ Ֆորմօզայի գեներալ նահանգապետի անձնական քարտուղար Սակկիչի Սախտօյին, որը մտադիր է այցելել Թիֆլիս իր թարգմանի հետ միասին ուսումնասիրելու շաքարի և թէյի արդիւնաբերութեան գործը»։ Այդ առիթով անհրաժեշտ կարգադրութիւն արվեց Թիֆլիսի ոստիկանութեանը։

◆ «Русск. Слово» լրագրի ասելով, պրօվօկատոր Գարթինգին գործակցողների թւի մէջ է Յովսէփ Դաւրիշեվը։

◆ Թիֆլիս է եկել 3-րդ Պետական Դումայի անդամ՝ Թիֆլիսի նահանգի ռուս ազգաբնակութեան պատգամաւոր՝ Տիմօշկինը։

◆ Թիֆլիսի պօստ-հեռագրական շրջանի նախկին կառավարիչ Լինդէնի անունով Թիֆլիսի միջնակարգ դպրոցներից մէկում ստիպենդիա հիմնելու նպատակով՝ տեղական պօստ-հեռագրական ծառայողները հաւաքել են իրանց մէջ 2000 րուբլի։

◆ Այսօր, յուլիսի 24-ին, Մանկական Աշխարհ» (Дѣтскій Міръ) ընկերութիւնը իր անդամների համար կազմակերպում է զբօսանք քաղաքից դուրս դէպի Մցխէթ կայարանը։ Մասնակցողների թիւը, չափահասներից զատ, անցնում է 130-ից։ Էքսկուրսանտները երկու առանձին մեծ վագոններով կուղևորվեն առաւօտեան 8 փորձառու անձանց ղեկավարութեամբ և կը վերադառնան նոյն օրը երեկոյեան։

◆ Անցեալ համարում մենք հաղորդել էինք իբրև տարածված լուր, որ կազմակերպվել է մի նոր ընկերութիւն «Կուրա» անունով, որը ձեռք է բերել Մանթաշեան և ընկ. նաւթարդիւնաբերական ձեռնարկութիւնները։ Այժմ պարզվում է, որ այդ լուրը անհիմն է։

◆ Ստացել ենք Ե. Տէր-Յարութիւնեանի «Ուխտագնացութիւն» գիրքը։ Գինն է 10 կ.։

◆ Յուլիսի 21-ին Թիֆլիսի քաղաքացի Իվան Ներսէսօվը յայտնել է ոստիկանութեանը, որ յուլիսի 20-ի երեկոյեան ժամը 9—10-ը երբ նա ուզում էր նստել Երևանեան հրապարակից Գօլօվինսկի պրօսպէկտով անցնող № 26 էլեքտրաքարշը, նոյն վագօնի կօնդուկտոր Մայսուրաշվիլին հրեց նրան ու վայր ձգեց սալայատակի վրա, որից նա ստացաւ ջարդուածքներ գլխի մասում։ Վիրաւորին իսկոյն ուղարկեցին Միքայէլեան հիւանդանոցը, որտեղ հարկաւոր օգնութիւնը ցոյց տալուց յետոյ արձակվեց տուն։

◆ 4-րդ քաղաքամասի ոստիկանութիւն զինուորական պահակախմբի օգնութեամբ յուլիսի 21-ին կալանաւորել է 8 հոգի անցագիր չունեցողներ։

◆ 3-րդ քաղաքամասի ոստիկանութիւնը զինուորական պահակախմբի օգնութեամբ յուլիսի 22-ին կալանաւորել է իր շրջանում՝ Ալեքսանդրեան այգում 43 հոգի անցագիր չունեցողներ։

◆ Լուր էր տարածված, որ տղայոց 1 գիմնազիայի դիրեկտոր Ի. Գամկրելիձէն թողնում է իր պաշտօնը։ Այժմ լսում ենք, որ նա առաջիկայ տարին էլ շարունակելու է իր պաշտօնը։

◆ Թիֆլիսի ոստիկանապետ պնդապետ Զասիպկինը վերջին երկու ամսվայ ընթացքում անձամբ քննութիւն կատարելով անցեալ տարվայ յունվարին անդրկասպեան երկաթուղու պօստատար վագօնից գողացված 400 հազար րուբլու մասին՝ կարողացել է երևան հանել մի շարք փաստեր գործի գլխաւոր կազմակերպիչների ու գործակիցների դէմ, որոնցից շատերը կալանաւորված են ու երկուսը նրանցից խոստովանել են իրանց յանցանքը և հնարաւորութիւն են տուել պարզելու ամբողջ գործը։ Կալանաւորվածները ուղարկվելու են Տաշքենդ։

◆ Վրացիների մէջ գրագիտութիւն տարածող ընկերութեան վլադիկավկազեան բաժանմունքի մի քանի անդամների նախաձեռնութեամբ այնտեղ մօտ ժամանակներս կազմակերպված է «Վլադիկավկազեան վրաց վարկային ընկերութիւն», որի նպատակն է զանազան տեսակ մանր վարկային գործողութիւններ կատարել։ Չը նայելով ընկերութեան անունին, կանօնադրութեան համաձայն ընկերութեան անդամ կարող են լինել նաև ուրիշ ազգութիւններից։ Ընկերութեան զուտ եկամուտով պահվելու է վրաց գրագիտական ընկերութեան վլադիկավկազեան դպրոցը։ Ընկերութեան հիմնական դրամագլուխը հաւասարվում է 2000 րուբլու։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

—

◆ Այն ժամանակ, երբ շարունակվում է կռիւը խօլերային ստորակէտի դէմ, դանդաղ, բայց հաստատուն քայլերով մօտենում է Պետերբուրգին մի այլ վտանգաւոր թշնամի։ Տեղական թերթերը, համարեա, ամենայն օր, արձանագրում են սիբիրական խտ կոչված հիւանդութեան դէպքերը։ Սիբիրական խտի վարակումը տարածվում է ոչ միայն հիւանդ անասունների միջոցով, այլ և անասուններից պատրաստված իրերից, որոնք արտադրվում են Պետերբուրգի շրջակայքի կաշեգէնի և բրդեղէնի գործարաններից։ Ահա հէնց այդ տեղերն էլ առողջապահական տեսակէտից շատ աննպաստ են և սիբիրական խտի համաճարակի տարածման համար գլխաւոր աղբիւրն են կազմում։

◆ Եկատերինօդարից հեռագրում են «Г. Коп.» լրագրին, որ ստանիցայի 12 երիտասարդներ բռնաբարել են մի աղջկայ, նախապէս ծեծելով ու փախցնելով նրա նշանածին, որը հեռւում կանգնած դիտում էր բռնաբարողներին։ Վերջիններս, իրանց գազանային կրքերը բաւարարելուց յետոյ, մօտակայ պանդոկում քէֆ անող մի խումբ ամուսնացած մարդկանց կանչեցին, որոնք գալով կրկնեցին գազանային գործողութիւնը թշուառ աղջկայ վրա։

◆ Վեատկայի նահանգի Սրէդնէիտկօվա գիւղում երիտասարդներից մէկը փող է պահանջել տեղական ուսուցչից օղի խմելու համար։ Մերժումն ստանալով նա դանակի մի հարուած իջեցնելով ուսուցչի սրտին սպանել է տեղն ու տեղը։

◆ Պետերբուրգում նորերս բացվել է «գարեջրագործութեան միջազգային ցուցահանդէս», որին մասնակցում են միայն ռուսական մի քանի գործարաններ։ Ցուցահանդէսը ողորմելի տպաւորութիւն է թողնում իր աղքատութեամբ. արտասահմանեան էքսպօնէնտներ չը կան բոլորովին։ Այցելուներ ևս չը կան։ Պատից կախված ադիւսակից երևում է, որ գարեջրի կողմից առաջին տեղը բռնում են Գերմանիան, յետոյ Ամերիկան, Անգլիան, Ֆրանսիան, իսկ վերջինների թւումն է Ռուսաստանը։

◆ Կիևի նահանգի Իրպէն ամարանոցից գրում են «Кіевскій Мысль» լրագրին հետևեալը. «Գետում լողանում էր տեղական ամարանոցատէր Կարպինսկու աղախինը։ Որովհետև լողարանների տէրը չէ թոյլատրում ամարանոց եկողներին լողանալ լողարանների մօտերքում, իսկ տեղական բարեկեցութեան մասին մտածող հասարակութիւնը հոգ չէր տարել լողացողների համար շինութիւն կառուցանելու, ուստի կանայք սկսեցին լողանալ բացօդեայ տեղում։ Կարպինսկու աղախինը լողանալիս ընկնում է խոր տեղը և սկսում է խեղդվել։ Նրա հետ միասին լողացող կանայք, փոխանակ որևէ մէկին անմիջապէս օգնութեան կանչելու, ափ են վազում հագնվելու։ «Ամօթխածութեան» փարիսեցիական զգացմունքը կատարում է իր գործը։ Մինչև կանայք կը հագնվէին, դժբաղդ կինը խեղդվում է։ Երբ կանայք վերջացրին իրանց տուալէտը, այն ժամանակ միայն գնացին լողացող տղամարդկանց իմաց տուին դէպքի մասին։ Օգնութիւնը ուշացել էր արդէն։ Ջրից հանեցին միայն խեղդվածի անշնչացած դիակը»։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Ղօչան (Պարսկաստան), 9 յուլիսի

Յուլիսի 4-ի երեկոյեան ժամը 9-ին, նախաձեռնութեամբ տեղիս երիտասարդ սիրողների, յօգուտ Ադանայի աղէտեալ հայերի, տրվեց հայկական մի ներկայացում։ Խաղացին նախ՝ Փանոսեանի «Բանաստեղծը», ապա՝ Է. Տէր-Գրիգորեանի «Խեչօյի թուղը» պիէսները։

Անտրակտների ժամանակ դերակատարներից մէկը նուագում էր ֆլէյտի վրա եւրօպական և ասիական մարշեր։ Խաղն ընդհանուր առմամբ անցաւ բաւարար և ներկայ գտնվող հասարակութիւնը հեռացաւ ուրախ տրամադրութեան տակ։

Զուտ օգուտ մնաց թէ տոմսակներից և թէ բուֆէտից 55 ղրան։

Հանդիսականների թիւը բաւարար չէր։

Իքս

—

Ղուբա, 20 յուլիսի

Յուլիսի 19-ին դերասաններ Շահէնը և Էլիզան տուին ամարային կլուբում հայ-թուրքական մի ներկայացում։ Հայերէն խաղացին Горина-Виндино, «Հարկաւոր չէ» և «Ադամ և Եւա», Թուրքերի պիէսաներն էին «Участное Воспитаніе» և «Хыръ-Хыръ»։ Խաղը լաւ անցաւ։ Աչքի էին ընկնում իրանց մտածված խաղով Շահէն, Էլիզա, օր. Բալասեանց, Շիալի և Սուլխայ։ Թատրօնը համարեա լիքն էր. զուտ արդիւնք եղաւ 90 րուբլի։ Մ. Սալամբէգեան

ՄԱՄՈՒԼ

Ինչպէս մեզ մօտ ազատագրական շրջանի օրերին հետզհետէ սկսեցին երևալ նոր նոր թերթեր և սառուցների նման անհետանալ, ինչպէս մեզ մօտ, յաճախ, խմբագրի ու ղեկավարի դերը ստանձնում էին անփորձ և համբակ երիտասարդներ, աշակերտներ, այն րօպէին, երբ պէտք էին վարպետներ,—նոյնպէս և Թիւրքիայում, օսմանեան յեղափոխութիւնից յետոյ, գաւառներում սկսվեց մի մտաւոր շարժումն, և սկսեցին երևալ զանազան տեղական թերթեր, շատերը խմորատիպ։

Սակայն այդտեղ ևս նոյն երևոյթը տեղի ունեցաւ. մտաւոր շարժման և հասարակական կարծիքը ղեկավարելու յաւակնութիւն ունեցող թերթերի գլուխ կանգնեցին անփորձ, համբակ, սօցիալական գիտութիւններին միայն վայր ի վերոյ և մակերևոյթապէս ծանօթ երիտասարդներ, յաճախ պատանիներ։

Ահա ինչ է գրում այդ առիթով «Շիրակ» հանդէսի մէջ (№ 19) Վ. Թէքէեան։

Գաւառներու մէջ մտաւորական շարժում մը սկսած է որ կը յայտնուի տեղական թերթերու հրատարակութեամբ՝ շատերը խմորատիպ և ոմանք տպագիր։

Այս շարժումը անպայման մեզ պիտի ուրախացնէր ասկէ առաջ՝ հակառակ իր բացասական կողմերուն, որոնք առաջին անգամ անխուսափելիօրէն պիտի տեսնուէին և որոնք աւելի շատ են, քան իր դրական արդիւնքները։

Հիմա, այն ժամանուր պայմաններուն մէջ, ուր կապրինք, ստիպուած ենք նուազ քաջալերիչ ըլլալ և չփափաքիլ, որ քաղաքական, ընկերային ու տնտեսական խնդիրներու մասին հանրային կարծիքի առաջնորդելու պաշտօնն ստանձնեն մեծ մասամբ անփորձ երիտասարդներ, որոնք ապահովաբար շատ եռանդ ունին, բայց քիչ զարգացում, դատելու և որոշելու դեռ քիչ կարողութիւն։

Այդ նորազարթ կամ իրենց գաւառի անկիւնին մէջ ցարդ արգելափակուած իմացականութիւններուն համար՝ մոլորիլն ու սխալիլը շատ բնական ու ներելի բաներ են, «դարբնելով դարբին կըլլայ մարդ», այո, պայմանաւ սակայն որ երկաթը առատ ըլլայ և վարպետը՝ դիւրահամբոյր։ Երկրին տակն ու վրայ եղած և ամեն ուշադրութիւն մեր վրայ դարձած պահուն չէ որ քաղաքական կեանքի աշակերտներուն թիւը աւելցնել պիտի ուզենք մեր մէջ, ուր վարպետները այնքան քիչ են արդէն։

Այս նկատումով է, որ պիտի թելադրէինք գաւառի մեր երիտասարդ ուժերուն—որովհետև դժբաղդաբար յաճախ միայն պատանիներն են գաւառական լրագրութեան հիմնադիրները—եթէ ոչ հրաժարիլ այդ իրենին օգտակար գործէն, գոնէ վերապահ դիրք մը բռնել այն փափուկ շրջանին մէջ, ուրկէ կանցնինք և որ կրնայ աննշան ու աննախատեսելի պատճառներով վճռական ըլլալ մէկ օրէն միւսը։

Այս յորդորը կարդալ գաւառին, ոչ միայն անոր թերթերուն, այլ հանրային և անհատական կեանքի բոլոր արտայայտութիւններուն համար, մեր պատրիարքարանին պարտքն է մանաւանդ՝ որ առաջնորդարաններուն միջոցաւ պէտք է հսկէ այդ մասին ալ։

Նոյն խորհուրդը պէտք է տալ և մեր նօրաբոյս հրատարակիչ-խմբագիրներին։

*

Թէ աղանդաւորութիւնը յաճախ որպիսի անհեթեթ դատողութիւնների և եզրակացութիւնների է հասցնում ոմանց մարդկանց, դրա մի նոր ապացոյց ևս տալիս է Յ. Սօլօվեանը «Սուրհանդակ» թերթի վերջին համարներում տպված իր մի քանի տաղտկալի յօդուածներով «Գրական էսքիզներ» վերնագրով։ Չենք խօսում մի քանի «կուրիօզների» մասին, որ սպրդել են այդ էսքիզների մէջ, ինչպէս, օրինակ, Եղիշէի ժամանակ հայերը նոյնն էին մտածում թուրքերի մասին, ինչպէս և այսօր, քանի որ յայտնի է ամեն մի պատանու, որ Եղիշէ պատմագրի օրերում թուրքեր չը կային Հայաստանում։

Յ. Սօլօվեան խօսում է այդ էսքիզների մէջ հայերի անկուլտուրականութեան մասին և իբրև ապացոյց առաջ է բերում այն հանգամանքը, որ հայ կրիտիկան ուշադրութիւն չը դարձրեց Ատրպետի «Մահմէդ-Ալի Շահ» ռուսերէն գրքի վրա, մինչ այդ գրքով Ատրպետը իբր թէ առաջին քայլերն է անում գրական ասպարէզում այն ուղղութեամբ, որ գրողը նուիրվում է աւելի մեծ շկօլայի, աւելի մեծ կուլտուրայի։

Սրանից պէտք է եզրակացնել, որ հայ գրողների մէջ Ատրպետն առաջինն է հանդիսացել օտար լեզուով գրքեր գրող։

Այս կարծիքն ևս մինն է այն «կուրիօզներից», որոնց ակնարկեցինք վերևում և որոնք արդիւնք են միայն յօդուածագրի կամ տգիտութեան կամ դիտաւորեալ անգիտացման։

Եթէ Յ. Սօլօվեան իր «էսքիզները» կամ «կուրիօզները» գրելուց առաջ մի քիչ ուսումնասիրած լինէր հարցը, անկասկած, նա կիմանար, որ Ատրպետից շատ առաջ եղել են ուրիշ հայ գրողներ, որոնք հէնց նոյն Պարսկաստանի և պարսկական մտաւոր շարժման մասին ուսումնասիրութիւններ են գրել ռուսական, ֆրանսիական, գերմանական լեզուներով, որ այդ ուսումնասիրութիւնները արժանացել են եւրօպական գրական քննադատների և հանդէսների գնահատութեան, ցոյց են տրվել իբրև գիտնական արժէք ունեցող գործեր, արտատպվել են գիտնական հանդէսների մէջ, և, սակայն, հայ քննադատութիւնը նոյնպէս ոչ մի ուշադրութիւն չէ դարձրել։

Ո՞ւր էր և ինչո՞ւ էր լռել այդ ժամանակ Յ. Սօլօվեանը։ Ինչո՞ւ այդ ժամանակ նա իր ձայնը չէր բարձրացնում։ Շատ պարզ էր պատճառը։ Այդ ժամանակ գրողը չէր պատկանում այն աղանդին որին պատկանում էր և Յ. Սօլօվեանը։ Բայց այժմ երբ գրող Ատրպետը և Սօլօվեանը միևնոյն հօսանքին պատկանող անձինք են, նա հարկ է համարել բողոքել այդպիսի երևոյթի դէմ և միևնոյն ժամանակ աշխատել ցոյց տալ, որ Ատրպետն է եղել առաջին պիօնէրը յիշեալ ասպարէզում։

Ահա ինչպիսի մասշտաբով հանդէս են գալիս այսօր մեր մէջ Սօլօվեանի պէս քննադատներ, որոնք նոյն իսկ վստահօրէն յայտնում են, թէ V դարում թուրքեր կային և Եղիշէները սխալ կարծիքներ էին յայտնում այդ թուրքերի մասին։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՏԷՐ-ՍԻՄԷՕՆԻ ԴԷՊՔԸ

«Մշակի» № 153-ում կարդացի Երևանից խմբագրութեան ուղղված մի նամակ, որ հրապարակ է հանում «կողոպուտի» պատճառով ծխականի և քահանայի միջև պատահած տգեղ ընդհարումը։

Երևոյթը և օրինակը պատահական չէ և ոչ էլ անհատական, և մինչև իսկ արժէ հասարակական դարձնել այն և խորհրդածութեան խնդիր շինել։

Նամակագիր Պետրոս Մելիք-Դադայեան գրում է «... տանը ինձ ասացին, որ արդէն մի քանի անգամ է՝ տէր-Սիմէօնը մարդ է ուղարկում մեզ մօտ՝ անկողնի և շորերի համար, և բացատրեցին ինձ, որ ինչ-որ սովորութիւն կայ հանգուցեալի անկողինը և շորերը տալ քահանային։ Պատուիրեցի տանը, որ աւելորդ բաները տան աղքատ կանանց, իսկ քահանային ոչինչ չը տան։ Եւ որպէսզի մի որոշ բաւարարութիւն տուած լինեմ քահանային, աւելի շուտ՝ բարեկամ պառաւների խաթրը չը կոտրելու համար, վճռեցի մի բան տալ քահանային»։ Վճռում է տալ 8 ր., քահանան քիչ է համարում, սակարկութեան մէջ է մտնում, վերջը Պետրոս Մելիք-Դադայեան իր այդ 8 ր. ուղարկում է Ադանայի աղէտեալների օգտին և, զայրացած, հոգևոր իշխանութեան ուշադրութիւնն է հրաւիրում ժողովրդի հովւի այդ վարմունքի վրա ու հրապարակով բացագանչում. «Վերջապէս մինչև երբ մեր քահանաներից շատերը բազար պիտի դարձնեն թէ եկեղեցին, թէ պսակադրութիւնը, թէ թաղումը, թէ մկրտութիւնը և այլն»։ Պատասխանը պարզ է... Մինչև որ ժողովուրդը կարգերը փոխի։

Տողերիս գրողը բնաւ կուսակից չէ եղել մեր քահանաների այն ձևով եկամուտներ ստանալուն, ինչ որ սովորութեան աւանդած եղանակով են ստանում ցայսօր։ Հետևապէս ես իսպառ հեռու եմ տէր-Սիմէօնին պաշտպանելու նպատակից, այլ ես գալիս եմ պնդելու, որ սովորութեան աւանդած այդ ձևը տգեղ է, ստորացուցիչ է, պատիւ ճանաչող մարդուն անվայել. բայց քանի որ այդ սովորութիւնը ժողովուրդը, իշխանութիւնը չէ վերացրել—արդարութիւն չէ այդ սովորութեամբ ընթացող քահանային մեղադրել, արդարացի չէ սովորութեան օրէնքով քահան. իրաւունքը համարված անկողինը, շորերը—կողոպուտը—կամայական կերպով յատկացնել ուրիշին, թէկուզ աղքատներին։ Իւրաքանչիւր ոք իր սեփականութեան տէրն է և իր սեփականութիւնից կարող է տալ ուրիշին։ Տնեցիք բացատրում են, որ սովորութիւն է անկողինը, շորերը տալ քահանային հետևապէս, ըստ սովորութեան, հանգուցեալի անկողինը, շորերը քահանային են պատկանում. այդ սովորութեան օրէնքին նայած՝ Մելիք-Դադայեան իրաւունք չունէր իրան չը պատկանած իրերը աղքատներին տալու և քահանային զրկելու կարգադրութիւն անել, և ոչ մի իշխանութիւն չէ կարող նկատողութիւն անգամ անել քահանային, որ նա թէկուզ սովորութեամբ իրան իրաւունք դարձրած հասոյթները—կողոպուտը—պահանջել է։ Այլապէս ինչով պիտի ապրի քահանան, եթէ ամեն մի ծխական քանդի սովորութիւնը, կտրի հասոյթը, կամ «բարեկամ պառաւների խաթրը չը կոտրելու համար՝ վճռի մի բան տալ քահանային». ուրքան արդարութիւն կը լինի։

Ես շատ ուրախ եմ, որ իմ հայրենակից Մելիք-Դադայեանի վրա այդ աստիճան վատ տպաւորութիւն է թողել տէր-Սիմէօնի վարմունքը, բայց աւելի ուրախ կը լինէի, երբ տեսնէի նրան հրապարակ ելած, ժողովրդին կոչ ուղղած այդ սովորութեան դէմ կռւելու, այդ այլանդակ սովորութիւնը տապալելու և ժամանակակից պահանջների համեմատ քահանաների պարզ և կանոնաւոր հասոյթներ սահմանելու նկատմամբ։

Իւրաքանչիւր ոք իրաւունք ունի իր վարձը պահանջելու սահմանված եղանակով։ Դիցուք թէպէտ տգեղ, բայց տիրող սովորոյթի օրէնքով վախճանվածի կողոպուտը՝ անկողինը, շորերը քահանայինն են, ուրեմն այդ սովորութիւնը քանի փոխված չէ, քանի այդ ձևը վերացված չէ, յիշեալ առարկաները դուք միայնակ ձեզէն գնահատելու լիազօր չէիք. հետևապէս տէր-Սիմէօն կարող էր և պարտաւոր էր իր շահը պաշտպանել։ Այո, ցանկալի է, որ ինչպէս քահանան չը ստորանայ մինչև սակարկութիւն, այնպէս և ծխականը չը հասցնի բանը սակարկութեան։ Սակայն տիրող սովորոյթը չէ կարող այդ ցանկալի վիճակը ստեղծել։ Այդ ցանկալի վիճակը առաջ կը գայ տգեղ ձևի բարեփոխութեամբ։ Այլապէս եթէ ամեն մինը իր տրամադրութեամբ գնահատի քահանային վերաբերեալ իրերը, «բարեկամ պառաւների խաթեր համար» բարեհաճի մի բան տալ քահանային, զայրացած՝ քահանայի հասոյթը Ադանայի կամ այլ կարօտեալներին տայ, կրկնում եմ, այդ չի լինի արդարութիւն։

Գ. Մելիք-Դադայեան տէր-Սիմէօնին անուանում է «ժողովրդի հովիւ»։ Եթէ իրօք տէր-Սիմէօնը լինէր «ժողովրդի հովիւ», գործն այդ խայտառակութեան չէր հասնի։ Ցաւն այն է, որ այսօր ժողովուրդը չէ որ գործում է, ժողովուրդը չէ որ դատում է, ժողովուրդը չէ որ կարգեր է սահմանում, քահանաներ է ընտրում, այլ անհատները, այլ զատ-զատ ծխականները. և քանի որ զատ-զատ ծխականների հետ գործ կունենան, զատ-զատ ծխականների ձեռքերին կը նայեն մեր քահանաները, քանի որ աւանդական տգեղ և անմիտ սովորութիւնները իբրև անսրբագրելի օրէնք կը պահվեն,—մեր եկեղեցին բազար կը մնայ և ցանկալի բարեկարգութիւն չի մտնի, չի թագաւորի։

Եկեղեցին կազմողը ինքը ժողովուրդն է. եկեղեցու տէր ու տնօրէնը ժողովուրդն է։ Քահանաները ժողովրդի քուէով ընտրված և ժողովրդի կողմից սահմանված կարգ ու կանոններով ընթացող պաշտօնեաներ են։ Արդարութիւն չէ մեղադրանքն ու պահանջը անհատներին ուղղել։

Եթէ սակարկութիւնը տգեղ է, տգեղ է և բանը սակարկութեան հասցնող պարագան և շատ անգամ դժուար է որոշել, թէ որ կողմն է մեղաւորը։

Քանի որ մեր ժողովուրդը անտարբեր է, քանի որ ժողովուրդը արժանաւոր ու անարժան պաշտօնեաների մէջ զանազանութիւն չէ դնում, քանի որ ժողովուրդը չէ կանգնում մաքրելու, սրբելու մեր եկեղեցին հնացած, անվայել, տգեղ սովորութիւններից ու աւանդութիւններից, մեր եկեղեցին էլ, մեր դպրոցն էլ, մեր բոլոր հաստատութիւններն էլ կը մնան ու կը լինեն «բազար շահագործութեան»։

Մեսրոպ ա.-ք. Մելեան

ՀԱՍՈՒՆԱՑԱԾ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋԸ

Երևանի մեր կօլլեգան՝ Մուշեղ Բագրատունին՝ իր՝ հայ մամուլի գաւառական թղթակից-աշխատակիցներին ուղղած բաց նամակով մի հասունացած խնդիր է դնում հրապարակի վրա։ Դա, ինչպէս արդէն գիտէ ընթերցողը, հօնօրարի խնդիրն է։ Վաղուց, շատ վաղուց մեր մամուլի գաւառական աշխատակիցները սովորել են աշխատել ձրիաբար։

Մ. Բագրատունու շօշափած խնդրի առաւելութիւնը կայանում է նրանում, որ նա հարցը դնում է հրապարակի վրա, տալով, այդպիսով, նրան պաշտօնական բնաւորութիւն։ Հէնց այդ տեսակէտից էլ նրա նամակը հետաքրքրութիւն է ներկայացնում իրանից, գոնէ ինձ համար։

Նա, խօսելով մամուլի անհրաժեշտութեան մասին առհասարակ, ասում է, ի միջի այլոց, հետևեալ խօսքերը. «Այժմ մամուլը պահանջ է դարձած մեր հասարակութեան համար։ Անցել է Նազարեան շրջանը և թեւակոխել մի ուրիշ փազի մէջ։ Այժմ նա խմորվել է մեր առօրեայ կեանքի բոլոր պահանջների հետ։ Նա մի անխուսափելի անհրաժեշտութիւն է և մի յենակէտ մեր մտաւոր ներկայ պահանջներին, նոյնը և նշանակութիւն ունի նրա տնտեսական, արդիւնաբերական, վաճառականական, հասարակական և քաղաքական բոլոր շրջանառութիւնների համար։ Մամուլը կենսական պահանջ է նոյնիսկ այն չափով, ինչ չափով որ հացի պահանջն է հանդիսանում։ Եւ մեր հասարակութիւնը նոյնիսկ չէ կարողանում մի օր առանց լրագրի մնալ, և դրա համար պահանջ է դնում հրատարակել այն նոյնիսկ կիրակի օրերը»։

Մենք համաձայն չենք Մ. Բագրատունու նամակի այդ մասի հետ։ Սխալ է այն տիրող կարծիքը, որ իբր թէ հայերէն թերթը կարուկ պահանջ է հայերի համար։ Ջարաչար սխալվում են նրանք, որոնք կարծում են, թէ հայը առանց լրագրի չէ կարող մնալ։ Հայերէն լրագրի պահանջը զգում է մեր ինտելիգենցեան միայն, այն էլ ոչ ամբողջովին։ Հայ ժողովուրդը լրագիր չէ կարդում, նա չէ հետաքրքրվում լրագրութեամբ, գրականութեամբ։ Եթէ հայ ժողովուրդը իսկապէս կարիք զգալիս լինէր մամուլի, եթէ նա կենսական պահանջ ներկայացնելիս լինէր նրա համար, այսօր հայ մամուլը, հայոց գրականութիւնն այնպիսի անմխիթար վիճակում չէին լինի։ Կատարեալ թիւրիմացութիւն է այն հանգամանքը, որ իբր թէ մամուլը կենսական պահանջ է ներկայացնում հայերիս համար։ Դա մի շաբլօն հասկացողութիւն է, որից պէտք է ընդմիշտ հեռու մնալ։ Այլ բան է, որ մամուլը պէտք է կենսական պահանջ լինի փոքր ի շատէ կրթութիւն ունեցող հայի համար. այլ բան է, որ նա,—ճիշդ որ,—անհրաժեշտութիւն ներկայացնէ իրանից մեզ համար։ Եւ եթէ մեր մամուլը չէ կանգնած իր կոչման բարձրութեան վրա, եթէ նա ընկած է, եթէ նրան չեն կարդում, չեն հետաքրքրվում նրանով, այդ բոլորը կատարվում է այն պատճառով միայն, որ մենք, խոստովանենք անկեղծօրէն, դեռ զարգացած չենք կուլտուրապէս։ Մենք մեզ խաբում ենք, ասելով որ մենք կուլտուրական ազգ ենք։ Այդ բոլոր աննորմալ դրութեան պատճառն ինքը հայ ժողովուրդն է իր անկուլտուրականութեամբ, տգիտութեամբ։

Հայ ժողովրդի մասսան թերթ չէ կարդում. դա աքսիօմա է։ Մէկը սովորաբար թերթ է բերել տալիս, որից օգտվում են շատ-շատերը։ Հայ ընթերցարանները սովորաբար յաճախորդներ չեն ունենում. նրանք իրանց գոյութիւնը պահպանում են դեֆիցիտով միայն։ Ո՞ւր են մեր ընթերցողները, ո՞ւր են հայ թերթի իսկական արժէքը գիտցողները, ո՞ւր են նրանք, որոնց համար «մեր մամուլը կենսական պահանջ է ներկայացնում»։

Ես միանգամայն ընդունում եմ, որ թերթը պահանջ պիտի լինի ամեն մի ինտելիգենտ մարդու համար. ես միաժամանակ ժխտում եմ, որ նա այդպէս չէ, ներկայումս գոնէ, մեզ համար։ Պէտք է հայ մամուլի վիճակը բարձրացնել, բարելաւել։ Պէտք է, կարելույն չափ, աշխատել, որ նա մեծ չափերով և մեծ թւով տարածվի հայ ժողովրդի լայն խաւերում, շրջաններում։ Այս կամ այն թերթի հրապարակ գալը դեռ չէ ապացուցում, որ նա պահանջ է մեզ համար։ Վերջին ժամանակներս երևան եկան մի շարք թերթեր, որոնք աչքի էին ընկնում իրանց խայտաճամուկ, անգոյն և բազմաբղէտ ուղղութիւններով։ Մեր նոր թերթերից և ոչ մէկը չը կարողացաւ որոշ ուղղութիւն մտցնել մեր մէջ, ստեղծել որոշ գրական շկօլա հայկական կեանքում։ Եւ հէնց այդ պատճառով էլ նրանք անկարող եղան երկար ապրելու մեր մէջ։

Թւում է մեզ, որ այդ թերթերի ղեկավարները, զուրկ որոշ և ինքնուրոյն գաղափարից, առաջնորդվում էին «изъ любви къ искусству» իմաստով միայն։

Թէև մենք քիչ շեղվեցինք մեր գրութեան բուն նպատակից, բայց պէտք է ասենք, որ մեր այս ընդհանուր դիտողութիւնները կարևոր էին մեզ զբաղեցնող հարցի լուսաբանութեան համար։

Բագրատունու նամակի լոյս տեսնելուց («Մշակ» № 107, 1909 թ.) անցել է մօտ երկու ամիս, և, չը նայած այդ երկար ժամանակամիջոցին, բացառութեամբ Սինանեանի, ոչ ոք արձագանք չը տուեց նրա համակրելի կոչին։ Զարմանալի է մեզ համար մանաւանդ այն հանգամանքը, որ մեր մամուլը կատարեալ լռութիւն պահպանեց մինչև օրս։ Մեզ համար հետաքրքրական է լսել մամուլի կարծիքը այդ հրատապ հարցի մասին։ Չը գիտեմ ինչպէս է վերաբերվում «Մշակը» այդ խնդրին, քանի որ նա մինչև օրս առիթ չէ ունեցել իր էջերում արտայայտելու իր կարծիքը գաւառական թղթակից-աշխատակիցներին վարձատրելու մասին։ Դրա փոխանակ՝ քաջ գիտեմ, սակայն, «Մշակը» երբեմն-երբեմն վարձատրում է նրանց։ Դեռ սրանից 2½ տարի առաջ, երբ ես գործերով Թիֆլիս էի, առիթ ունեցայ խօսելու Ալ. Քալանթարի հետ հօնօրարի մասին։ Ալ. Քալանթար իր արտայայտած մտքերով ցոյց տուեց ինձ, որ ինքը միանգամայն կողմնակից է վարձատրութեան սկզբունքին. նա ոչինչ չունի դրա դէմ։ Բայց «Մշակի» միջոցները չեն ներում, որ այդ վարձատրութիւնը լինի օրինաւոր և կանոնաւոր։ Պէտք է ասեմ, որ այդ պրինցիպը մինչև օրս էլ խախտված չէ «Մշակի» կողմից։

Հետաքրքրական է սակայն, կրկին եմ պնդում, որ «Մշակը» հրապարակով յայտնէ իր կարծիքը հասունացած այդ խնդրի մասին։

Իմ համեստ կարծիքով, աւելի լաւ է ունենալ 1—2 թերթ դրված հաստատուն հիմունքների վրա, քան թէ հեղեղել մեր գրական շուկան էժանագին, անպէտք, փողոցային թերթուկներով։ Շատ ցանկալի է, որ 1—2 թերթ յարատեւութիւն ունենալու բաղդն ունենան մեր մէջ. կարևոր և անհրաժեշտ եմ գտնում, որ մեր թերթերը պահեն սեփական թղթակիցներ, գոնէ, Ռուսաստանի նշանաւոր քաղաքներում, եթէ այդ նոյնն անկարելի է անել արտասահմանի համար։ Իսկապէս, ինչ՞ է նման թերթը առանց սեփական թղթակիցների։ Պէտք է այդ բացը ծածկվի մեր մամուլի մէջ, թէև «Մշակի» կողմից, որ արդէն սեփական թղթակիցներ ունի մի քանի քաղաքներում։

Վերջացնելով տողերս, մենք, միանալով Մուշեղ Բագրատունու շօշափած խնդրին և իր բաց նամակի վերջին երկու կէտին՝ կօնֆերենցիայի վերաբերեալ, մեր կողմից աւելացնում ենք, թէ ցանկալի է, որ գաւառական թղթակից-աշխատակիցների համագումար անպատճառ տեղի ունենայ ոչ ուշ, քան մինչև մի տարին։

Ես ցանկալի և կարևոր եմ գտնում, որ այդ համագումարը լինի առաջիկայ տարի, 1910 թ. ամառը, Թիֆլիսում, որին ներկայ լինելու հնարաւորութիւն կունենան մեր գաւառական համարեա բոլոր աշխատակիցները։ Իսկ մինչ այդ ցանկալի է, որ այդ հարցը նախնական քննութեան ենթարկվի մեր պարբերական մամուլում։

Հայ մամուլի գաւառական թղթակից-աշխատակիցների համագումարի քննութեան առարկաներ, անշուշտ, լինելու են հօնօրարը և նրա հետ այս կամ այն կերպ առնչութիւն ունեցող այն հարցերը, որոնք ծնել և առաջ են բերել նրա անհրաժեշտութիւնն ու կարևորութիւնը...

Ի բոլոր սրտէ աջողութիւն ենք ցանկանում գաւառական աշխատակիցների անդրանիկ համագումարին։

Ոսկու-Ջօն

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Յ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։

Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—11—ժ. աչքի, ներքին և նեարդային։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։

Մ. Փ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Ն. Վ. ԱԼԲՐԵԽՏ—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։

Օ. Վ. ԳԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 ժ. ներքին և երեխայոց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Օ. Վ. ԳԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—6— հ. ժ., մանկաբարձ., կանանց և երեխայոց։

Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Հիւանդների բաժանմունքով

Թիֆլիս, Ելիզավետինսկայա փ., 78, հեռ. 1026.
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր.

ՄԻՔ. ԱՂԱՋԱՆԵԱՆ—առ. ժ. 11—12-ը միզասեռական, սիֆիլիսի և կաշուի հիւանդ. (երկուշ., չորեքշ., ուրբ.)։

Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ—առ. ժ. 11—12-ը ջղային և ներքին հիւանդութիւններ։

Մ. Պ. ԿԻՄՕՆՑ—առ. ժ. 11—12-ը վիրաբուժական հիւանդութիւններ։

Ս. Ա. ԼԻՒՐԻ—առ. ժ. 11—12-ը քթի, բկի և ականջի հիւանդութիւններ։

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ—առ. ժ. 10—11-ը ներքին և երեխաների հիւանդութիւններ։

Մ. Ե. ՄՋԱՐԷՈՒԼՕՎ—ցեր. ժ. 1—2-ը կաշուի և սիֆիլիսի հիւանդութիւններ (երեքշ., հինգշ., շաբաթ)։

Լ. Մ. ՄՕՆԻՆ—ցեր. 1—2-ը կանանց հիւանդ. և մանկաբարձ.։

Բժշկութիւն էլեկտրականութեամբ, մասսաժով և հիպնօզով։ Միկրօսկօպիական, բակտերիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ։ Ծաղկի պատուաստում։ Ծծմայրի քննութիւն։ Վճարը խորհրդի համար 50 կոպէկ։ Օպերացիաները և համախորհուրդները ըստ համաձայնութեան։ Հիւանդների բաժանմունքը բաղկացած է թէ ընդհանուր և թէ առանձին սենեակներից։

(կ. ե. ու.) 236. 100—46

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Ամառային երթևեկութիւն
(Թիֆլիսի ժամանակով)

Թիֆլիսից մեկնում է

ԲԱՔՈՒ՝ ՊՕՍՏԱՏԱՐ գնացքը 11 ժ. 38 ր. երեկ., Գանձակ է հասնում 6 ժ. 1 ր. առ., Եւլախ՝ 7 ժ. 58 ր. առ., Հաջի-Կաբուլ 1 ժ. 12 ր. ցերեկ. Բալաջարի 4 ժ. 43 ր., Բաքու՝ 6 ժ. 7 ր. երեկ.։ ՄԱՐԴԱՏԱՐ ԳՆԱՑՔ № 6՝ 7 ժ. 36 ր. առ., Գանձակ է հասնում 1 ժ. 41 ր. ցերեկ., Եւլախ՝ 3 ժ. 36 ր. ցերեկ., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 15 ր. երեկ., Բալաջարի՝ 11 ժ. 37 ր. գիշ., Բաքու՝ 12 ժ. 44 ր. գիշ.։ ՄԱՐԴԱՏԱՐ ԳՆԱՑՔ № 12՝ 10 ժ. 11 ր. երեկ., Գանձակ՝ 4 ժ. 13 ր. առ., Եւլախ՝ 6 ժ. 8 ր. առ., Հաջի-Կաբուլ՝ 10 ժ. 32 ր. Բալաջարի՝ 1 ժ. 44 ր. ցերեկ., Բաքու՝ 2 ժ. 18 ցերեկ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ ՊՕՍՏԱՏԱՐ 1 ժ. 44 ր. գիշեր., Ալեքսանդրօպօլ է հասնում 12 ժ. 35 ցերեկ., Ուլուխանլու՝ 6 ժ. 11 ր. առ., Ջուլֆա՝ 1 ժ. 10 ր. գիշեր.։ ՄԱՐԴԱՏԱՐ ԱՊՐԱՆՔ. 5 ժ. երեկ., Ալեքսանդրօպօլ է հասնում 3 ժ. 38 ր. առաւ., Ուլուխանլու՝ 9 ժ. 12 ր. առաւ., Երևան՝ 10 ժ. 7 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ՝ ԱՐԱԳ. ԳՆԱՑՔ 8 ժ. 31 ր. երեկ., Բաթում է հասնում 7 ժ. 41 ր. առ.։ ՊՕՍՏԱՏԱՐ՝ 9 ժ. 4 ր. երեկ., Բաթում է հասնում 10 ժ. 33 ր. առ.։ ՄԱՐԴԱՏԱՐ՝ 1 ժ. 1 ր. գիշ., Բաթում է հասնում 2 ժ. 34 ր. ցերեկ.։

Թիֆլիս է հասնում

ԲԱՔՈՒԻՑ՝ ՊՕՍՏԱՏ. ԳՆԱՑՔԸ 8 ժ. 6 ր. առաւ. ՄԱՐԴԱՏԱՐ № 5՝ 12 ժ. 11 ր. գիշ.։ ՄԱՐԴԱՏԱՐ. № 11՝ 10 ժ. 45 ր. առ.։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ ԱՐԱԳ. 9 ժ. 36 ր. առ., ՊՕՍ. 10 ժ. 38 ր. երեկ., ՄԱՐԴԱՏԱՐ՝ 8 ժ. 42 ր. առ.։

ՋՈՒԼՖԱՅԻՑ-ԵՐԵՒԱՆ՝ ՊՕՍ. 6 ժ. 26 ր. երեկ. ՄԱՐԴԱՏԱՐ-ԱՊՐԱՆՔ. 6 ժ. 27 ր. ցերեկ.։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
Ռ. Խան-Ազատ եւ Գ. Վարդանեան
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
27 նկարներով և մի մեծ գունաւոր քարտէզով։

Դասընթացք ծխ. դպրոցների IV բաժանմունքի և ժողովրդական ընթերցանութեան համար։

Գինն է 75 կոպ.

Գլխաւոր պահեստը «Գուտտենբերգ» գրավաճառանոցում. կարելի է դիմել և հեղինակներին՝ — Тифлисъ, Сурпъ-Нишанское училище.

(օ. մ.) 625. 10—8

ԲԱՑԱՌԱՊԷՍ «ՄՇԱԿԻ» ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ներկայ յուլիսի 15-ից մինչև առաջիկայ օգոստոսի 15-ը «Մշակի» բոլոր բաժանորդները՝ թէ Թիֆլիսի և թէ դրսի (նոյնպէս արտասահմանի) արտօնութիւն ունեն «Աղբիւր-Տարազի» Շտուտգարդում հրատարակած մեծադիր ֆօտօ-գրաւիւր ս. ԷՋՄԻԱԾԻՆ պատկերը (մինչև օրս հրատարակվածներից ամենաաջողը և ամենագեղանին) հատը 1 ր. 50 կ. և ՎԵՀԱՓԱՌ ԻԶՄԻՐԼԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ պատկերով մի դիւժին (12 հատ) բաց նամակ գինը 50 կ., ընդամենը 2 րուբլու փոխարէն ստանալ ՄԻ ՌՈՒԲԼՈՎ հանդերձ ճանապարհածախսով։

«Ս. Էջմիածին» պատկերը կարելի է ստանալ և պատրաստ շրջանակների մէջ՝ 1 ր. 50 կ. մինչև 3 ր. «Աղբիւր Տարազի» խմբագրատնից։

—

Պատկերն ու բաց նամակները բաժանորդին կուղարկվեն պատուէրն ստացած օրը պօստով, խնամքով ամրացված յատուկ խողովակներում։

«Մշակի» բաժանորդները պէտք է պօստային փոխանակագրի վրա կպցնեն իրանց տպված հասցէն, պոկելով «Մշակի» բանդերօլից։

Վերադիր վճարով կամ ապառիկ պատուէրներ չեն ընդունվում։

—

Պատուէրները պէտք է ուղարկել «Մշակի» կամ «Աղբիւր-Տարազի» խմբագրութիւնների հասցէներով։

Թիֆլիսի բաժանորդները ստանում են իրանց պատուէրը իսկոյն «Մշակի» կամ «Աղբիւր-Տարազի» խմբագրութիւններից։

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ և ՎԵՀԱՓԱՌ ԻԶՄԻՐԼԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ պատկերով 12 հատ բաց նամակներ մասնաւոր մարդկանց համար արժեն 2 ր., նոյնպէս և «Մշակի» բաժանորդների համար, օգոստոսի 15-ից յետոյ։

665. 3—3

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ
ՅՈՎՍԷՓ
Մելիք-Ջհանեանցի

Тифлисъ, Лермонтовская ул., № 4 (близъ III мужск. гимназіи)

Ընդունվում են աշակերտներ գիշերօթիկ և երթևեկ. պատրաստում են բոլոր միջնակարգ դպրոցների համար։ Աւանդվում են ռուս, հայ, գերման, լատին և ֆրանսիական լեզուներ։

(օ. մ.) 604. 20—9

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ
Ի. ՖՕՆ-ԲՐԷՆՆԷՐԻ
Հիմնված 1890 թ. Թիֆլիսում
Նաբերեժնայա փող., Վերայի կամուրջի մօտ.

Յատուկ առևտրական ուսումնարան երկու սեռի անձանց համար, 15 տարեկանից ոչ պակաս։ Դասարանները պատրաստում են հաշւապահի, թղթակցի, գործակալի և այլն պաշտօններ վարելու կառավարչական, հասարակական և առևտրա-արդիւնաբերական հիմնարկութիւններում։ ՕՐԻՆԱՒՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ։ ԴԱՍԱԽՕՍՆԵՐԻ ԼԱՒ ԿԱԶՄ։ 19 տարվայ ընթացքում աւարտել են հազարաւոր երիտասարդներ, որոնք այժմ վարում են պատասխանատու պաշտօններ։ Մանրամասնութիւնները ձրիաբար տրվող ծրագիրներում։ Խնդիրների ընդունելութիւնը սկսված է։ Պարապմունքները սեպտեմբերի 15-ից։ Գրասենեակը բաց է ամեն օր։ (օ. մ.) 667. 13—3



ԻՆՉ Է ԱՆԿԷՐԸ

ԱՆԿԷՐԸ—դա այն մեխանիզմն է, որը համարվում է ժամացոյցների մէջ ամենալաւ կազմուածք ունեցողը։ Հետևաբար խորհուրդ ենք տալիս պատուիրել մեզ մօտ իսկական «անկէր» ժամացոյց։ Ուղարկում ենք սև պողպատի ժամացոյց, իսկական «անկէր», որ գլխաւորն է՝ «Լեվէ վերիէլ», ընթացքը 15 քարերով, լարումը 40 ժամը մի անգամ—կոթից, տղամարդ. ժամաց. անկէր կամ կանանց՝ ցիլինդր, միայն 3 ր. 25 կ., 2 հատը 6 ր.։ Ժամաց. ուղարկվում են մինչև բօղեները ստուգելուց յետոյ, 5 տարվայ երաշխաւորութեամբ, վերադիր վճ. և առանց կանխավճ.։ Ճանապարհածախսը 1—2 հատի համար 40 կ. (Սիբիր՝ 75 կ.)։ Մեր ժամաց. Ռուսաստանում տարածելու համար իւրաքանչ. ժամաց. ՁՐԻ կցում ենք ոսկէ մատանի՝ 56 յարգի, պարիզեան ադամանդով, որը դժուար կարելի է զանազանել իսկականից, շքեղ ֆուտլեարի մէջ։ Շքեղ և մօդային շղթաներ ժամաց. համար, իսկական նոր ոսկուց, բրելօկով, հատը 75. կ. և 1 ր. 50 կ., երկճիւղ շղթայ՝ հատը 2 ր. 50 կ. և 3 ր. 50 կ.։ Հասցէագրել՝ Т-ов АЛЬПАГА, Варшава. Отдѣл. 23

(26. յուլ. 10, 24.) (В. 39768) 565. 3—3

Электропечатня Н. Г. Аганьянцъ Полицейская 7.